



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սպասման և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կոդով
մեդիայով կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material



65
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԳԶ.

ԶԱՅԱՐՄԱՅԱԼԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԱՅԻՍՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ


ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



ՎԻԵՆՆԱ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1923



ՉԱՆԱՐՄԱՆԱԼԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՆԱԻԻՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԳԶ.

ԶԱՅԱՐՄԱՅԱԼԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆԸ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1923

Գիրքը գրադարանում չի պահվում

191.99.09
Ե-79

ՅՅՈՒԳԱՄ Է 1957

2րայ.

398 (47.925)

ՉԱՅԱՐՄԱՅԱԼԻ

2 >

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԱՅԻՍՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ

Ա Ր Ա Մ Ե Ր Ե Մ Ե Ա Ն



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1923

A II
30273
13602.



ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Հայոց զբաւոր աւանդութեան մէջ նուազ են ակնարկութիւններ մեր նախնեաց վարուց, բարուց եւ ընտանեկան սովորութեանց մասին. բայց այդ նուագութիւնը կրնայ լրանալ, տեղ տեղ նաեւ լուսաւորուիլ. համեմատական ազգագրութեամբ, եթէ անիկա իւր հետազօտութիւնները կատարէ բազմակողմանի հայեցմամբ, ուսումնասիրելով ոչ միայն մէկ կամ միւս գաւառի կամ քաղաքի ժողովրդեան կենցաղը, սովորութիւնները եւ անգիր աւանդութիւնները, այլ եւ տարածելով իւր ցանցը բոլոր հայաքնակ վայրերու վրայ: Հաւաքուած նիւթերու համեմատութիւնը պիտի համէ երեւան միասնական երեւոյթներ՝ ամէն գաւառի համար հասարակաց, եւ սեպհականութիւններ՝ յատուկ իւրաքանչիւր գաւառի, որոնցմէ սուաջինը պիտի ներկայանայ հայ ժողովրդեան հասարակաց ստացուածք՝ ժառանգուած հինաւուրց նախնիներէն, եւ երկրորդն ըստ մասնէ եկամուտ՝ փոխ առնուած օտար ժողովուրդներէ:

Երուանդ Լալայեանց իւր «Ազգագրական Հանդիսին» մէջ լայն էջեր բացած էր այսպիսի ուսումնասիրութեանց եւ հում նիւթերու համար: Բայց դժբախտաբար, ինչպէս ժամանակը ցուցուց, շատ ուշ եղած էր սկիզբը: Ո՛րչափ հայաքնակ գաւառներ մարդաթափուր եղան վերջին համաշխարհական պատերազմին եւ անդրէնածին ժողովրդոց հետ ի սպառ անհետացան սովորութիւններ, անգիր աւանդութիւններ... դեռ չուսումնասիրուած:

Անցեալի սխալը ներկան պէտք է քաւել, եւ այն որչափ շուտ այնչափ լաւ:

Այս տեսակէտով Պր. Արամ Երեմեանի այս փոքրիկ աշխատութիւնը իւր համառօտութեան մէջ իսկ կը համարիմ անգնահատելի գործ մը իւր տեսակին

մէջ, որ կու տայ մեզի հայ ժողովրդեան տարաշխարհիկ քեկորի մը աւանդութեանց փշրանքները, խնամով հաւարուած:

Առաջին հայեցուածքին թերեւս երեւան անոնք հայ քանահիւսութեան աննշան մնացորդները, քայց եթէ նայինք անոնց ազգագրագէտի մը աչքով, պիտի ըմբռնենք անոնց մեծագին արժէքը՝ հեռաւոր հնութենէն մեզի հասած: Անոնք հայրենի հին հին աւանդութեանց թանկագին քեկորներն են պահուած ժողովրդեան մը քերանը, որ 300 տարի յառաջ քննազօսիկ տեղահանուած իւր քնիկ երկրէն՝ Արարատեան դաշտէն՝ տարուած հաստատուած է օտարաշուրթն, այլալեզու ցեղերու մէջ, ուր դարեր շարունակ ապրած է ի հեծուկս անթիւ հալածանքներու, զրկանքներու... եւ շնորհիւ իւր կորովին կրցած է պահել զոյութիւնը լեզուով, սովորութիւններով եւ կրօնքով:

Դարերու ընթացքին ենթարկուեցաւ անշուշտ զինքը շրջապատող ամբոխին ազդեցութեան եւ օտարօտի սովորութիւններ եկան քարդուեցան հարազատին վրայ. այսու հանդերձ դարձեալ գերիշխող եղած են անոր վրայ հայրենաստուր աւանդութիւնները՝ ժառանգութեամբ քերուած քնաշխարհէն:

Ո՛րչափ ընտանի կը հնչեն հայ ականջին այն հարսանեկան, մանկական երգերը, հանելուկները, աղօթքները, օրհնութիւններն ու անէծքները... հակառակ իրենց կրած աղաւաղութիւններու՝ պարսիկ ազդեցութեան տակ:

Եթէ զտենք մաքրենք այդ եկամուտն, օտարը, Արարատեան քարքառն է որ պիտի խօսի մեզի, այն քարքառն, որով հայ գեղջուկն իւր ընտանեկան յարկին տակ կ'երգէր, կ'առակաջանէր, կ'օրհնէր... Ժէ՛ դարու սեամբին եւ անկէ յառաջ:

Համեմատութիւն մը անոնց եւ քնիկ հայաքնակ գաւառներու քանահիւսութեան պիտի պարզէ մեր առջեւ նոյնութիւններ, զոնէ էական կազմին մէջ, որոնք հակառակ տեղիս տեղիս տարածայնութեանց, նոյն մայր ականադրիւրին կը դիմեն կը հասնին, այսինքն քնիկ հայ ժողովրդեան:

Ազգագրութիւնը միայն շնորհակալութիւն կրնայ յայտնել Պր. Ա. Երեմեանի, որ մեղուաջան աշխատու-

թեամբ քաղած, հաւարած է Չահարմահալի հայ գեղ-
ջուկին անդաստանէն այս մեղրափոշիները եւ փրկած է
գունոնք ժամանակի կրծող ժանիքներէն:

Իյս տեղ արդէն իւր հողին վրայ է Երեմեան, որ
թզաւ եւ քլաւ շափած հարաւային Պարսկաստանի
հայաքնակ գաւառները, վեց տարի շարունակ ապրած
է ժողովրդեան մօտ եւ արժանացած անոր վստահու-
թեան, ինչ որ անհրաժեշտ պահանջք մըն է այս կարգի
ուսումնասիրութեանց համար:

Ոչ միայն հաւարած է անգիր քանահիւսութիւն-
ները, այլ եւ տուած է իւր պէսպէս աշխատութեանց
մէջ ազգագրական նիւթեր այս ժողովրդեան կենցաղա-
վարութենէն եւ գրաւոր աւանդութիւններէն, որոնցմէ
մաս մը կը գտնուի արդէն հրապարակի վրայ. որպի-
սիք են. «Նոր-Ջուղա» (1919), «Սպահանի Փէրիա գա-
ւառը» (ազգագրութիւն) 1909, «Պարսկահայ աշուղներ.
փշրանքներ աշուղական գրականութիւնից». Պրակ Ա-Գ
(1920—1921). այլ եւ ուրիշ անտիպ գործեր, որոնք կը
սպասեն տպագրութեան, եւ քաղմաթիւ յօդուածներ
այլ եւ այլ պարբերականներու մէջ:

Կը ցանկանք որ Հեղինակը նոյն եռանդով շա-
րունակէր իւր քանասիրական-ազգագրական գործու-
նէութիւնը, աւելի լայն ծրագրով:

Վիեննա, 8 Մարտ 1923:

Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ

ՉԵՀԵՐՄԵՀԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԵԿԵՆ ԲԵՆԵՀԻՒՍՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժողովրդական բանահիւսութիւնն այնքան էլ զարգացած չէ Չահարմահալի՝ գաղթական գիւղացիների մէջ եւ դա հասկանալի պատճառով. մի ժողովուրդ, որ դարեր շարունակ տնտեսական անմիսիծար դրութեան մէջ է գտնուել եւ հացի խնդիրը կոշմարի նման ծանրացել է նրա սրտի վրայ, բնական է, որ բանաւոր գրականութիւնը չի կարող նրա մէջ զարգացած լինել: Պատմութիւնն ականբեւ ապացոյց է մեր ասածին. եւ այդ է պատճառը, որ ժողովրդական բանահիւսութեան տեսակները Չահարմահալի ժողովրդի մէջ հատ ու կտոր են: Մենք շրջեցինք Չահարմահալի բոլոր հայաբնակ գիւղերը, — Գէյշէխ, Մամուռան, Լիվա-

1 Չահարմահալը Պարսկաստանի Սպահան քաղաքի եւ Պարսկա-Հնդկաստանի թեմի հայաշատ եւ կարեւոր գաւառներից մէկն է, ուր այժմ բնակւում են մօտաւորապէս 3485 շունչ հայ գիւղացիներ: Նրանք բեկորներն են այն մեծ գաղթականութեան, որ կատարւեց 17րդ դարում (1606 թւին), Շահ-Աբրահիմ ձեռքով:

սեան, Ներքին-Քօնարք, Աւերին-Քօնարք, Մու-
շիգան, Շահբուլաղ, Սինագան, Աղբուլաղ,
Մամուքա, Հաջիարադ, Սիրաք, Ահմադաբադ,
բացի Բալլիսլուից, — եւ հաւաքեցինք այն
ամէնը, ինչ որ պատուում էր ջահէլ աղջիկների,
հարսների եւ պառաւ կանանց բերաններում:
Դրանք մեծամասնութեամբ մանկական, սիրային,
հարսանեկան, սգոյ, երգիծական, տօնական,
կրօնական պարզ ու անարուեստ բանաստեղծու-
թիւններ, աղօթքներ, մանկական խաղեր, այլ եւ
հէքեաթներ, հանելուկներ, առածներ, օրհնանք-
ներ, երգումներ ու սնոտիապաշտութիւններ են,
որոնց մէջ գերազանցօրէն երեւան է գալիս
գիւղացիների սիրտն ու հոգին, այսինքն նրանց
զգացմունքներն ու մտքերը, իդէալներն ու
ձգտումները, կրօնական ու բարոյական հայ-
եացքները, հաւատալիքներն ու սովորութիւն-
ները, նիստ ու կացը, վարք ու բարքը: Աւերին-
բանաւոր գրականութեան այդ տեսակների մէջ
անդրադառնում է գիւղացիների անցեալ ու
ներկայ արտաքին ու ներքին կեանքը, որի մասին
պատմութեան մէջ ոչինչ չկայ յիշուած:

Թէ ե՞րբ եւ որտեղ են յօրինուել բանա-
հիւսութեան այդ պատառիկները, յայտնի չէ:
Այսքանը միայն պարզ է, որ նրանք ստեղծուել
են տարբեր ժամանակներում եւ տեղերում,
կեանքի բազմազան դէպքերի ու անցքերի
ազդեցութեան ներքոյ, եւ բերանից բերան,
սերնդից սերունդ անցնելով՝ տարածուել են
Չահարմահալի բոլոր հայաբնակ գիւղերում:

Այդ երգերի հեղինակներն ու տարածողներն եղել են գիւղական ջահէլ հարսներն ու աղջիկները, որոնք մինչեւ այսօր էլ դեռ սրբութեամբ պահել պահպանել են իրենց բանահիւսութեան հատ ու կտոր փշրանքները:

Այդ թանկագին կտորները, որոնք մինչեւ այժմ էլ անտես են մնացել մեր բանահաւաքների կողմից եւ անհետանալու ու մոռացման վիճակին են մօտեցել, գեղարուեստականութեան տեսակէտից աչքի են ընկնում իրենց անկեղծութեամբ եւ զգացմունքների ու պատկերների պարզութեամբ: Այժմ այստեղ առաջ բերենք իւրաքանչիւրն առանձին առանձին՝ գաղափար տալու համար նրանց ներքին իմաստի բովանդակութեան եւ գլխաւորապէս Չահարմահալի բարբառի մասին¹:

1. Մանկական երգեր:

Հայ բանաւոր գրականութիւնը մանկական երգերի տեսակէտից բաւական միջինարական մի պատկեր է ներկայացնում, մեր ազգագրական հանդէսների մէջ կան մանկական մի շարք գողտրիկ երգեր, որոնց մէջ մայրերը դրուատում են իրենց ազիզ ձագուկներին:

¹ Յիշեալ բարբառի երգերը հաւաքելիս՝ օգնել է մեզ բնիկ Չահարմահալի եւ ուսուցիչ պր. Կարապետ Մանսուրեանը, որին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնները:

Չահարմահալի մանկական բանահիւսու-
թեան բաժինը սակայն աղքատ է: Այդ ուղղու-
թեամբ յօրինուած երգերից ձեռք բերինք հա-
զիւ ինը կտոր, որոնց հիմը համարեա միեւնոյնն
է՝ գովեստը, միայն բովանդակութիւնով ու
արտաքին ձեւով են զանազանւում նրանք մի-
մեանցից: Այդ երգերը երգում են մայրերն ու
աղջիկները իրենց տան փոքրիկներին խաղացնե-
լիս: Տեսնենք:

Ա.

Մայրը բռնում է մանկիկի թաթիկները եւ
ծափահարելով՝ երգում.

Մէ տղա ունենք, մէ տուն է,
Դուս կանչեցէք, դա տէսնենք.
Տէյտէրի քաքուլ ունի,
Մօնթէրու ճալվէր ունի,
Թէլթէլ քամուն չի տանի.
Չանգամանի հորըն է,
Քալանթար Սարգսի թոռն է.
Էս բէմէն էն բէմըն է,
Բէմատակում ջուր խմի,

Սուրբ սէղանում կուտ կուտի.
Էրկթէ — էրկթէ մարթիքը,
Փէդէ — փէդէ կնանիքը,
Չառ քաքուլով տղերքը,
Փունջ մանիշագ հաշները,
Հաշներու միջի ո՞րն է սիրուն.
— Կառճ ու բօլորը.
Տղերքանց միջի ո՞րն է սիրուն.
— Թօփ — թօփ քաքուլը:

Բ.

Մայրը երեխային դնում է ավերի մէջ
եւ տարուբերելով՝ երգում.

Դօլս ես, դօլ — դօլ ես,
Նօղւամանիս դուլարն ես.
Եաղութիս փշրանքն ես.
Ալմաղիս գլխանքն ես.
Սօվդագարիս ձաքն ես.
Ղալամքարիս թագն ես.
Դու իմ սիրուն տղէն ես,
Դու իմ օսկէ ջղէն ես:

Գ.

Մայրը շնորհաւորում է որդու Զատիկը.

Ա տղա — տղա,
Դու ալ կապավօր,
Ղումգի շալ կապավօր,
Դու իր հայոց դաքավօր.
Բօթլօվ գինին խտուրն,
Ասամանի կապավօր,
Քո Զադիքը շնհավօր:

Դ.

Դան արա, դանդան արա,
Ղօչ գառը քի մատաղ արա.
Օսկօռը քի սայեա արա,
Մէջն նստէ, գիւնն արա:

Ե.

Մայրն աղջկայ թաթիկները ծափահարե-
լով՝ ասում է.

Ախշիգս ախշա ունի,
 Համամի բօխշա ունի,
 Զառօվ սանդուխշա ունի,
 Մարթու գնա՝ տուն ունի,
 Ճուճուկներուն բուն ունի,
 Դէ բունի, բունի ճուճուկներ:
 Համամ գնացած ախշիգ,
 Վօդներդ վլացած ախշիգ,
 Զուրաբ ջհայսաբօվ ախշիգ,
 Փայ ու բաժինբօվ ախշիգ:

Ձ.

Ախշիգ ունենք ըռանգին,
 Պահէլ ենք՝ տանք ֆռանգին.
 Ֆռանգն էկաւ մէյ դուռը,
 Օսկին համրէց հօր բուռը.
 Վով արժան է՝ գա տանի,
 Վով արժան չէ՝ չըտանի.
 Յաճկէրը ցոյդը տանի,
 Վօդները ձունը տանի:

Է.

Մայրը շնորհաւորում է աղջկայ Զատիկը.

Օվսանա ջան, Օվսանա,
 Ուրախ Զադիգ լուսանա.
 Բաբիդ գա Հնդստանա,
 Բէռնէր բէրի քաթանա.
 Քաթան դօշագ տակիտ է,
 Զառ թակալէն հաքիտ է:

Ը.

Քոյրն իր եղբօրը խաղացնելիս՝ ասում է.

Ախպէր, ախպէր, ջան ախպէր,
 Մէջկէ գօլըստան ախպէր.
 Կապա կարեմ կառճ գուքայ,
 Գուգմա շարեմ խաչ գուքայ.
 Կարմիր կօվանդ ինչ արիր,
 Ծառի տակը գում արիր.
 Շերէփ — շերէփ կթէցինք,
 Գդալ — գդալ բաժնէցինք.
 Հօռոմն ասաւ. ինձի տուր.
 Կաքաւն ասաւ. ինձի տուր.
 Ո՛չ Հօռոմին, ո՛չ կաքաւին,
 Յամմէն ծառին մի փշատ,
 Իմ ախպրտանց ումբըը շատ:

Թ.

Ախպէրս շահի դուռը շոքած էր,
 Զօգուռը դօշին քօքած էր,
 Փողը ծնդին կիտած էր.
 Հայրն էկաւ, բարօվ տվէց,
 Թուրքն էկաւ, քարօվ տվէց,
 Նասրան էկաւ, կօպլօվ տվէց:

2. Սիրային:

Ժողովրդական սիրային բանահիւսութեան
 բաժինը հարուստ է մեզանում. դրա գլխաւոր
 պատճառն այն է, որ այդ ճիւղն ամենից շատ է
 գրաւել մեր բանահաւաքների ուշադրութիւնը,
 որով բազմաթիւ թանկագին կտորներ կան հա-
 ւաքուած Մ. Մ. Միանսարեանի «Քնար հայ-
 կական»-ի, Արիստակէս վարդ. Սեդրակեանի
 «Քնար Մշեցւոց եւ Վանեցւոց»-ի, հ. Արիստակէս

Տէվկանցի «Հայերգ»-ի, Վահան վարդ. Տէր-
Մինասեանի «Անգիր դպրութիւն եւ առակք»-ի,
Սարգիս Հայկունու «Ժողովրդական երգ, առած,
հանելուկ»-ի, ինչպէս եւ Կոմիտաս վարդ. եւ
Աբեղեանի «Հազար ու մի խաղ»-ի, Երուանդ Լա-
լայեանի «Ազգագրական հանդէս»-ի, Հ. Ս. Խ.
Իւթիւճեանի «Բիւրակն»-ի եւ այլ ազգագրական
թերթերի ու ազգային-ժողովրդական երգարան-
ների մէջ:

Այդ երգերը մեծամասնութեամբ զգաց-
մունքով լի, գողտրիկ նուագներ են, որոնց մէջ
կան օրինակ, այսպիսի տողեր.

Ախ կանեմ, արուն կու գայ,
Սեւ սրտիս գարուն կու գայ.
Կորուցել եմ իմ եարը,
Ո՛վ գիտէ, ե՞րբ տուն կու գայ:

Զահարմահալի ժողովրդական բանահիւ-
սութեան մէջ եւս կան մի քանի սիրային նուագ-
ներ, որոնք իրենց կառուցուածքով եւ բովանդա-
կութեամբ բաւական բանաստեղծական են.
Դրանցից մէկի մէջ գեղջկուհին սիրազեղ սիր-
տը բանալով՝ պատկերացնում է իր անսահման
սէրն ու զգացմունքը: Կէս օր է. սիրական ազիզը
բնութեան ծոցում, սարի լանջին, հողի կուրծքն
է պատռում, իսկ եարը պատրաստել է «ղայ-
լանը», «թամբաբին», «ղանդը» եւ իր ազիզին
տուն է կանչում.

Ազիզ, ազիզ տուն արի,
Զաքմէքդ չարվադարի,
Ղայլանդ չաղի արի.

Թամբաքուդ վայթի արի.

Ջուրդ գուլարի արի.

Արակդ զանդի արի.

Տուն արի ազնիւ, տուն արի:

Սա չէ՞ յիշեցնում ձեզ Աւետիս Իսահակեանի «Մաճկալ»-ը.

Դադրած, բէզարած եւր ջան,

Ամպերն ելան, դէհ, արի.

Բէզարած ջանիդ զուրպան,

Ծափից թեւ առ, թէզ արի:

Այս օրինակ սիրերգների մի գեղեցիկ նմուշ է նաեւ հետեւեալը.

Վիրեւ էլանք կտուրը, տէսանք՝

Վով է գալիս, վով է գալիս.

Յիրեք թիփ ձիավոր է գալիս.

Վոյն է սիրուն, վոյն է սիրուն,

— Նարինջ ձիավոյն է սիրուն:

Վոյն է սիրուն, վոյն է սիրուն,

— Ճէրմագ գդագվոյն է սիրուն.

Վոյն է սիրուն, վոյն է սիրուն,

— Կանանչ կապավոյն է սիրուն:

3. Հարսանեկան երգեր:

Ինչպէս իւրաքանչիւր ազգ, այնպէս էլ Հայ ժողովուրդն իր կեանքի անհուն վշտերի եւ տանջանքների հետ ունի ուրախութեան ու խրախճանքի օրերը, որոնց մէջ նշանաւոր տեղ է բռնում հարսանիքը, որ իւրաքանչիւր գիւղ կամ գաւառ տօնում է առանձին ծէսերով:

Այդ հանդիսի շուրջը Հայ ժողովուրդը հիւսել է բազմաթիւ երգեր, որոնց մէջ պատկերաց-
ւում է հարս ու փեսի, ինչպէս նաեւ նրանց
շրջապատող հարսնեւորների հոգեկան ուրախ
տրամադրութիւնն ու ապրումները: Անշուշտ
հին, հեթանոս հայերի մէջ էլ եղել են այդ-
պիսի երգեր, որոնցից սակայն մեզ հասել է
միայն մի կտոր, շնորհիւ մեր պատմահօր
Մովսէս Խորենացու. այդ երգի մէջ երգւում
է Արտաշիսի եւ Սաթենիկի հարսանեկան հան-
դիսի մի դրուագը.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի,
Տեղայր մարգարիտի հարսնութեան Սաթենիկան:

Գուսանական այս փշրանքը մեզ գաղա-
փար է տալիս, թէ մեր թագաւորներն ու
իշխանները ինչպիսի մեծ հանդիսով էին կատա-
րում իրենց հարսանիքը: Իսկ ազգային այլ յի-
շատակարաններ նկարագրում են, թէ հար-
սանեկան այդ հանդէսներն աւելի հրապարա-
կական ձեւ էին ստանում, մանաւանդ թագա-
ւորների ամուսնութեան ժամանակ: Այրերն եւ
կանայք, երիտասարդներն ու ջահել աղջիկները
ձեռք ձեռքի տուած՝ հրապարակներում պարում
էին «պար» եւ «պարանցիկք» ու երգում
երգեր, որոնցից յիշւում է «ցուցք» կամ
«երգք ցցոց»:

Մեր ժողովրդական գրականութիւնը բա-
ւական հարուստ է հարսանեկան երգերով,
որոնցից շատերը հաւաքուած են Գիւտ քհնյ.

Աղանեանի «Լումայ»-ի, Երուանդ Լալայեանի
 «Ազգագրական հանդէս»-ի, Իւթիւճեանի
 «Բիւրակն»-ի եւ այլ ազգագրական հանդէս-
 ների մէջ:

Հարսանեկան մի քանի երգեր գոյութիւն
 ունեն նաեւ Չահարմահալում, որոնց մէջ պատ-
 կերացում է գիւղացիների հոգեկան ուրախ
 զգացմունքները: Այսպէս, Չահարմահալցի երի-
 տասարդը մեծացել, արբունքի է հասել, մայրը
 գնում է նրա համար մի սիրուն աղջիկ ճա-
 րելու: Տեսէք, նա ինչպիսի ֆանտաստիկական
 պատկերներով է գրուատում իր սիրուն հարս-
 նացունին.

✓ Կտուր-կտուր վարեցինք,
 Մէ սիրուն ախչիգ ճարեցինք.
 Գնացինք, տեսանք քնած էր,
 Վայթն յէրէսին փռած էր,
 Գաթէն ծոցը փխլած էր,
 Նուռը ջերը փնջնած էր,
 Խնձորը ձեռը խածած էր,
 Արբէշում խալին փռած էր,
 Ախչիգը վրէն քնած էր,
 Օսկէ ջամը կռծած էր,
 Էրծթէ նռնէրը շարած էր.
 Ախչիգը թուխ էր՝ պաչեցինք,
 Խնձորը փուխ էր՝ խածեցինք: J

Հարսանիք է. սիրուն հարսին տուն են
 բերում սաղ ու դաբով եւ թրմաշալ քողով:
 Բոլորն էլ հոգեկան ուրախ տրամադրութեան
 մէջ են. հնչում են անուշ երգերը եւ խնդում
 սրտերը: Թագաւորի քրոջ սիրտն էլ է տրո-

փում անհուն ուրախութիւնից եւ ահա նա
լարում է քնարն ու բանաստեղծում.

Ախպոյս հաշնիք սաղօվ է,
Հայսին բէրինք նաղօվ է,
Հայսի նաղը կրքաշենք,
Գլխին թրմաշալ քաշենք
Յեղնէն բութաղառ քաշենք:

Ապա թագաւորի գովքը, որ երգում
են «ծառ» գովելու ժամանակ: Ծառը փոխա-
բերական մտքով թագաւորն է. նրա մայրը
մի մատուցարանի մէջ քաղցրաւենիք կամ չամիչ
ածելով՝ դնում է հանդիսականների առաջ,
ապա թագաւորը, քաւորը եւ խաչեղբայրը
կանգնում են «Փարդի» առաջ. դրա վրայ
հանդիսականներից մինը երգում է.

Օրհնեալ է Աստուած.
Օրհնեալ է Յիսուս.
Օրհնեալ է Քրիստոս.
Դաքլօրն բէրինք քե նման,
Քու կանանչ յարէվի նման.
Էն Սուսան-սըմբուլն, որ բացվէլ է,
Օ՛ր բացվէլ է, յարէվի նման:

Յետոյ խմբովին թնդացնում են.

Սուրբ Արապետայ՝
Օրհնութունով,
Օրհնութունով,
Ծառսի ծաղկեցաւ,
Ծառ ծաղկեցաւ,

1 Յիշեալ տունը երգում են բոլոր սրբերի անուն-
ներով:

Ճուխկ բազմէցաւ,
Կանանչ ու կարմիր:

Այժմ թագաւորին հինայ են տանում
կամ գնում են նրան բաղնսից բերելու: Բաղնսի
դռան առաջ զարդարուն հարսներն ու ջահէլ-
ները պար են բռնել, ծափ տալիս, խնդում,
խաղում, իսկ սազն անուշ ծլււում է ու լարում
զգացմունքները: Եւ ահա խմբովին թնդացնում,
թագաւորի գովքն են անում.

Դաքլօրի յէրէսը պարզ,
Տղամարթիքն ապրած.

Դաստ բըդաստ,
Դուշմանը սազ,
Ձին վազզուգ,
Թուրը կտրուկ,
Երկնքէն ցօղ,
Գետնէն պտուղ.
Հօյ շօբօշ,
Հօյ շօբօշ...

4. Սգոյ երգեր:

Մեր ժողովրդական գրականութեան մէջ
կան բազմաթիւ եղերերգներ, որոնց մէջ դառն
եւ սրտամորմոք մոտիւով երգւում է վշտի
զգացմունքը, որ առաջանում է գլխաւորապէս
սիրելի անձանց կորստից:

Չահարմահալի ժողովրդական բանահիւ-
սութեան մէջ եւս կան մի քանի սգոյ երգեր,
որոնց գեղջկուհիներն ողբաձայն արտասանում
են իրենց սիրելիների մահուան ժամանակ: Եթէ

մեռնողը յայտնի անձնաւորութիւն է, օրինակ
գիւղի տանուտէրը, գովում են այսպէս.

Մաջլս նշին բաբամ ջան,
Քեադխուդա նշին բաբամ ջան,
Իմ խան շնաս բաբամ ջան:

Եթէ տան հայրն է մեռնողը՝ ողբում են.

Մէյ տան սութուն բաբամ ջան,
Մէյ տան բարաքաթ բաբամ ջան,
Մէյ խէլք ու խրաթ բաբամ ջան,
Մէյ մէհնքեաշ բաբամ ջան:

Եղբայրը ողբում է քրոջը.

Քուրում, քուրում, քուրում ջան,
Իմ ազիզ քուրում ջան,
Իմ ձէռի եայլուղ քուրում ջան:

✓ Քոյրը ողբում եղբօրը.

Բրար, բրար, բրար ջան,
Ջանիդ մեռնիմ բրար ջան,
Պակտաց խիղնիդ մեռնիմ, բրար ջան,
Գառնէրդ բօռալէն մնացին, բրար ջան:

✓ Մայրը ողբում է որդուն.

Բալամ ջան, բալամ ջան,
Ազիզ գառնիկ, բալամ ջան,
Սրդի ճրագ, բալամ ջան,
Ծնգնէրս ծալէցիր, բալամ ջան,
Կռնէրս կոտրէցիր, բալամ ջան,
Բալամ ջան, ազիզ ջան:

Սովորաբար ողբի վերջին խօսքերի վրայ
միւսները բարձրաձայն լալիս են եւ շատ անգամ

իրենց վարսերը փետում, կրծքերին խփում,
ծնկներին զարկում, գլուխները թակում եւ
երբեմն էլ ուշագնաց ընկնում են:

5. Երգիծական:

Հայ ժողովուրդն իր դարեւոր վշտին միացրել է յաճախ խինդ ու ծիծաղը եւ արտադրել երգիծական մի շարք երգեր, որոնցից շատերը դեռ անգիր շրջում են նրա բերանում: Նրանց մէջ ժողովուրդը սրամիտ ծաղրի եւ հեգնութեան է ենթարկում կեանքի այս կամ այն երեւոյթը:

Չարմահալցի գեղջկուհին եւս հիւսել է մի քանի սրամիտ երգիծական կտոր. օրինակ, հետեւեալ փոքրիկ ոտանաւորը, որի մէջ պատկերացւում է Լիվասեանցի գեղջուկի անաղնիւ ոգին: Մի անգամ Լիվասեանցի մի հայ գիւղացի դաշտից գողանում է մի պարսկի կովը եւ տուն բերելով մորթում է: Պարսիկը բռնում է աւազակ գիւղացուն, բայց նա ուրանում է իր արարքը. դրա վրայ պարսիկը նրանից պահանջում է երգուել եկեղեցու դռան առջեւ: Լիվասեանցին եկեղեցու դռան շէմքին ծնրադրելով՝ ասում է.

Է՛յ սուրբ էգեղէցի,
Դու ծանդրը տեղդ կէցի.
Էս անիրավի կովը մորթէցի,
Միսը խիզանս կէրան,
Կաշին էլ շինէցի խնօցի:

Պարսիկը հայերէն չի իմանում եւ կարծում է, թէ Հայն իսկապէս անկեղծ սրտով է երգւում, ուստի թողնում է եւ հեռանում:

Մի ուրիշ երգիծաբանութեան մէջ երեւան է գալիս գեղջուկի ատելութեան ոգին դէպի իր դրացի պարսիկը: Երբ որեւէ Հայ գեղջուկ պարսկի հետ ոխ է ունենում, երեկոյեան անկողին մտնելիս՝ ասում է.

Հայրի որթի, հոգին սուրբ,
Օրէն սատկի հըզար թուրք,
Հայիցը մէ ճուտ,
Էն էլ սուտ:

Հետաքրքրական է նաեւ հետեւեալ երգիծական ոտանաւորը, որի մէջ գեղջուկին ցոյց է տալիս իր նեղ ոգին.

Ախպէրս գնաց Ղումիշա,
Տկի ձին էր ալաշա.
Գեղ կանգրէցին թամաշա.
Բոյթ ու բամբազ աբրէշում,
Գէղի խիզան իմ ախպօր շուն:
— Տկօվ, տկօվ ջուր էկաւ,
Խօսրօֆ խանը շուռ էկաւ:

Ապա հետեւեալ երգիծական կտորը, որի մէջ պատկերացւում է գեղջուկ հարսի ճնշուած եւ ծանր դրութիւնը: Աղօթարանը բացւում է եւ հարսը մի հաց է գողանում. թէ ինչո՞ւ համար, անգիտեմք կեսուրը նրան քաղցած էր պահում, յայտնի չէ: Կեսուրը բռնում է հարսի գողուածիւնը եւ չի կարողանալով տանել՝ նրան ան-

գըթօրէն ծեծում է. հարսն էլ սկեսրոջ ձեռքից
ազատուելու համար՝ գնում է թրքանում: Այս
ամբողջ պատմութիւնն ամփոփուած է եօթը
տողի մէջ.


Լուսը լուսացաւ,
Հայսը վեր կացաւ,
Մէ հաց գողացաւ,
Կէսուրն յիմացաւ,
Տվէց՝ թուլացաւ.
Գնաց թուրքացաւ,
Օնչով չիմացաւ:

Ահա գեղջկական քնարից երգիծական մի
ուրիշ նմուշ, որը ասում է տէգրը, երբ ծեծում
է հարսին.

Բէգղադ հայս,
Կանչեմ դաս,
Ծէծեմ լաս,
Զընգընգալով էրթաս,
Նանիդ խաբար տաս:

Այսպիսի երգիծական յօրինուածքների
մի յաջող նմուշ կարելի է համարել նաեւ հե-
տեւեալ մանկական կտորը.

Սանա, սանա Օվանա,
Քամար ունես մէ դանա,
Մաղէր ունես, մէ բանա,
Միճկիդ տվին վայդանա,
Բա յուր ասիր, վայ նանա:



6. Տօնական երգեր:

Չահարմահալում գիւղացիներն առանձին հանդիսով եւ ծիսերով են տօնում իրենց ազգային-եկեղեցական տօները, որոնց մէջ անդրրադառնում են նրանց հաւատալիքներն ու զգացմունքները: Տօնական այդ սովորութիւններից շատերը կրում են հին, հեթանոսական դարերի դրոշմը. օրինակ, Աւարդավառին իրար վրայ ջուր սրսկելու սովորութիւնը. Տեառն ընդառաջին եկեղեցու բակում փայտակոյտ վառելու եւ նրա վրայից թռչելու արարողութիւնը. սրանց վրայ աւելացնենք Համբարձման տօնի ծիսերն ու հաւատալիքները, խնջոյքներն ու խաղերը: Այս բոլորը յիշեցնում են մեզ հեթանոսական ժամանակները:

Ահա այդ տօներից մի քանսի մասին գեղջկուհիները հիւսել են մի քանի փոքրիկ երգեր, որոնցից ուշագրութեան արժանի են Ծաղկազարդի եւ Ծննդեան երգերը, որոնց մէջ երգւում են Յիսուսի ծնունդը, կանանց-սիրուն Ծաղկազարդը եւ այլն: Այդ երգերը սովորաբար երգում են երեխաները Քրիստոսի ծննդեան գիշերը եւ Ծաղկազարդ Աիւրակէ առաւօտեան. նրանք մի քանի խմբեր կազմած շրջում են տների կտուրները, երգիկներից մի « եայլուղ » կախում եւ խմբովին թնդացնում են.

Յնծացէք, ուրախացէք,
Պառկը բացէք,

Մէ բուռ ածէք,
Ալէլուեա՛, ալէլուեա՛:

կամ՝

Ծառ զարթար, ծառին զարթար,
Սեւ եղին սեւ սամաթէլ,
Կարմիր եղին նօղլ ու կօծաք.
Հնկէրս ընդաւ ծօյն ու ծառաւ,
Բաջին էկաւ կեռ-կեռ կտուց,
Ապրի ձեր դաքսօրցուն,
Տվէք մէյ էրկու ձուն

Տնեցիները սովորաբար տալիս են երեխա-
ներին ձու, չամիչ, աղանց (բոհրուած ցորեն) կամ
1—2 դռան փող:

7. Կրօնական երգեր:

Կրօնական երգերից մեր ձեռքը հասել է
միայն մի քանի կտոր. դրանցից մէկը սուրբ Էջ-
միածնայ մասին հիւսուած գովասանութիւն է:
Հայութեան սրբազան այդ ուխտատեղին, որի
հետ սերտ կերպով կապուած է Չահարմահալի
Ժողովրդի սիրտն ու հոգին, երգի նիւթ է
դարձրել: Ահա թէ ինչպէս է նա դրուատում
պատմական այդ սուրբ վանքը.

Էջմիածին բանցրը սար է,
Տաճայնէրը մարմար քար է.
Հրդարան հիւանթի ճար է,
Բժշկարան Էջմիածին:

Ուխտ են գալիս բուրէց բուր,
Հրդարան ախպէր ու քուր,

Դու էտոնց խօրուրթը տուր,
Ուխտ ու դիլագ էջմիածին:

Էջմիածին խօրըյթարան է,
Վայթապետ յառաջնօյթարան է.
Դաս տիրացու մօնթարան է,
Հօքէվօր դաս էջմիածին:

Բայց սյս չէ բոլորը. տեսէք, գեղջկուհին
դեռ ինչեր է ցանկանում սրբազան Մայր-Տա-
ճարի համար.

Մէ տղիս տէյտէր քչինեմ,
Մէգիս վայթապետ քչինեմ,
Ին մէգիս սարգաւարք կօնեմ,
Էջմիածին քկանգրէյնեմ:

Մի այլ ոտանաւորի մէջ պատկերացում
է Չահարմահալցի մօր կրօնական ոգին. նրա
սիրեկան որդին մեծացել է եւ տիրացու դարձել
ու քաղցր ձայնով շարական է երգում եկեղե-
ցում. մայրը հպարտ է նրանով, ուստի դրուա-
տում է.

Տղէս պստիկ էր, մեծացաւ,
Իւրն ճանանչացաւ,
Խէլքն բոլորէց:
Յառավօտ լուսացաւ,
Տղէս վեր կացաւ,
Նստեց վրացվէց,
Քաբուլը սանդրէց,
Աստծուն գուհացաւ,
Վաղէց ժամադուռ,
Հաքաւ զառ շաբիք,
Կանգրէց դէմ տաճայ,

Քաղցրը ձայնովը,
Երգէց շարական.
Կանգրօղնէրի սիրտն էր ուղում:

Այժմ որդին քահանայ է ձեռնադրուել,
Աստուծոյ տաճարին սպասաւորող է եւ ժողովրդին հովիւ. մօր սիրտը լցուած է անհուն ուրախութեամբ, ուստի երգում է.

Տղէս գնաց վանքը,
Առաւ իւր կարքը,
Քցէց զառ շուռչալ,
Վօղնէրն ուղաթափ,
Կանգրէց դէմ տաճայ,
Քաղցրը ձայնովը,
Երգէց սուրբ ավետարան.
Կանգրօղնէրի սիրտն էր ուղում:

8. Աղօթքներ:

Դարերից ի վեր Հայ ժողովրդի մէջ գոյութիւն ունեն մի շարք աղօթքներ, որոնցով արտայայտում է նա իր կրօնական աշխարհահայեացքը, զգացումներն ու մտորումները: Այդ աղօթքները, որոնք մեր կրօնական գրականութեան գողտրիկ էջերն են կազմում, բաւական թւով ամփոփուած են հայ ազգագրական հաւաքածունների մէջ:

Չահարմահալցի հայ գեղջկուհու քնարն եւս կերտել է մի շարք գողտրիկ աղօթքներ, որոնց մէջ պատկերացւում է նրա կրօնական ջերմեռանդ հոգին: Նրանց մէջ գեղջկուհիները,

մի առանձին ջերմեռանդութեամբ, դիմում են
 Աստուծոյն կամ Յիսուս-Քրիստոսին, երբեմն եւ
 Ս. Կոյս Մարեամ մօրն եւ ուրիշ սրբերին՝
 Ս. Կարապետին, Ս. Գէորգին, Ս. Սարգսին,
 Ս. Մինասին, բաց անում նրանց առաջ իրենց
 դարդոտ սրտերը եւ մի ճար, դարման հայցում
 կամ իրենց մեղքերի համար թողութիւն
 աղերսում, որպէս զի արքայութիւն գնան... Այդ
 աղօթքները գեղջկուհիներն ասում են օրւայ
 որոշ ժամանակներում. առաւօտեան՝ քնից զար-
 թելիս, երեկոյեան՝ զանգերը հնչելիս եւ գի-
 շերը՝ քնելիս: Ծանօթանալք: Երեկոյ է. հնչում
 են գիւղական եկեղեցու զանգերը եւ ահա ջեր-
 մեռանդ գեղջկուհիներ յաղթաւոր բերանները
 մրմնջում են.

Օրհնեա՛լ է Աստուած .

Օրհնեա՛լ ի սուրբ զանգաձէնին,
 Երկիր պագանեմ լուս գէրէզմանին,
 Քրիստոսի տեսուն .

Քրիստոս էկաւ վէր աշխար,
 Ավիրէց դժոխկ,
 Շինէց գրախտ,
 Կաթնօվ ախպուր,
 Քարէ տաճայ .

Էս ունեմ Աստուծոյն վրճար,
 Աստուած անի իմ հօքուն ճար .

Մեղա՛յ, մեղա՛յ, հրդար մեղայ,
 Խօստովանիմ անքան հրդար .

Եա՛սուրբ կուս Մէր-Մայրամ Աստուածածին,

Ուրախ սրտով փափաք դամ,

Պարզյէրէս ջուղաբ տամ,

Տէր մէյ Յիսուս. Քրիստոս, ամէն:

Ո՛հանք էլ այսպէս են աղօթում.

Եւ սուրբ զանգաձէն,
Ձէնդ հասնի Աստծուն,
Աստուած լսի, օղորմայ.
Օրհնեալ է Քրիստոս,
Քրիստոս էկաւ վէր աշխար,
Ավիրէց դժոխի,
Շինէց դրախտ,
Քարէ տաճայ,
Կաթնով ախպուր.
Քրիստոս տա մէջի բարբառ լեզու,
Ապաշխարվենք, վօդը լանք,
Պարզւերէս ջուղաբ տանք:
— Տէր մէ, Յիսուս-Քրիստոս,
Մէյ յերէսին մէ դուռ բանաս:

Իսկ երեկոյեան քնելիս՝ աղօթում են.

Մայրամ Աստուածածին, կուս Մայրամ,
Դու ինձ տուր բարբառօց բերան,
Ապաշխարեմ, մէխկէրըս լամ,
Բարով պայծառ վօդդ գամ,
Քաղցրւերէսով ջուղաբ տամ.
Յիսուսն է, Յիսուս է,
Բարի հրեշտակն հօքուս է.
Ո՛չ չարն ինձ խափի,
Ո՛չ սատանէն ինձ կապի.
Չարն ինձնից հեռացաւ,
Բարին ինձի մօտեցաւ,
Հարգիղ շունիմ բարութուն,
Իմ մէխկէրուն թօղութուն,
Իմ հօքուն հանգիստ արքայութուն:

Կամ՝

Հաւատամ Տէր կենդանի,
Մայրամ նստաւ սուրբ սեղանի.

Մայրամ քուն ես, թէ զարթուն,
 Ոչ քուն եմ, ոչ զարթուն.
 Հողէղէնի հոտ է գալիս,
 Գնացէք, տէսէք վով է գալիս,
 Յիրեք ձիավոր է գալիս,
 Մէզն հագ, մէզն սագ,
 Մէզն էլ օսկէբէրան վայթապետ,
 Վայթապետներն ժամ անելով,
 Տէյտերներն բուռվառ տալով,
 Ըրթարներն ճլվլալով,
 Մեղաւորներն լալով, լալով,
 Փուշ ու տաստակ կոխատելով:

1. Չար աչքի աղօթքներ: Ինչպէս հայա-
 բնակ շատ գաւառներում, այնպէս էլ Չահարմա-
 հալում գիւղացիները մինչեւ այժմ դեռ հաւա-
 տում են «Չար աչքին», որը՝ նրանց կարծիքով՝
 հմայում է մարդկանց եւ շատ թշուառութիւնների
 ու ձախորդութիւնների պատճառ հանդիսանում
 եւ դժբախտացնում բազմաթիւ ընտանիքներ:

Չար աչքը, նիւթը խափանելու եւ նրա
 ազդեցութիւնը հեռացնելու համար, գեղջկու-
 հիւները հիւսել են մի շարք աղօթքներ, որոնք՝
 նրանց կարծիքով՝ բուժիչ յատկութիւն ունեն,
 այսինքն հալածում եւ ոչնչացնում են չար
 աչքերին եւ մարդկանց փրկում նրանց՝ չար
 ազդեցութիւնից: Այդ հաւատքն այն աստիճան
 խորացել է գեղջկուհիների մէջ, որ նրանք ամե-
 նաչնչին հիւանդութիւնների եւ դժբախտու-
 թիւնների ժամանակ, «Չար աչքը տուէլ է»,
 ասելով՝ աղօթել են տալիս: Այդ տեսակի
 աղօթքներից Չահարմահալում ամենից շատ

տարածուած են «Մէր-Մայրամայ» աղօթքները,
որոնք իրենց հիւսուածքով եւ բովանդակու-
թեամբ միմեանցից շատ քիչ տարբերութիւն
ունեն: Ընդհանրապէս «Չար աչքի» աղօթող-
ները պառաւ կանայք են, որոնք աղօթելիս՝
վերցնում են մի դանակ կամ մատանի եւ
պտտցնում հիւանդի ուսերի ու գլխի վրայ եւ
շարունակ յօրանջելով՝ շնչում են.

Ա.

✓ Աշխարումը մէ ծով կայ,
Ծովի մէջ մէ գօլ կայ,
Գօլի մէջ մէ ձուգ կայ՝
Յաճկէր ունի արագի,
Մաղէր ունի գրօղի,
Օց քկթի, օց քմէրի,
Չար նիաթին՝ չար փուշ պատի,
Չար յաճկը տրաքի:

Բ.

Գնացի Մօսէսայ սարը, մէ ծով կայ,
Ծովի մէջը մէ գէդ կայ,
Գէդի մէջը մէ ծառ կայ,
Ծառի վրայ մէ բուն կայ,
Բնի մէջը մէ ձու կայ,
Չվի մէջը մէ օց կայ,
Օցը մազ ունի երագի,
Յաճկ ունի ապիկի,
Օց է մէրում, օց է կթում:
— Օրհնեալ է Տէր մէյ Յիսուս Քրիստոս:

Գ.

Երուսաղէմ մէ գօլ կայ,
Գօլի վրայ մէ ծառ կայ,

Ծառի վրայ մէ ճուղկ կայ,
 Ճըղկի վրայ մէ բուն կայ,
 Բնի մէջը մէ ձու կայ,
 Չվի մէջը մէ ձաք կայ,
 Չաքը թեւ առաւ ու թռաւ,
 Աստուած տէսաւ, զարմացաւ:
 — Օրհնեալ է Տէր մէյ Յիսուս-Քրիստոս:

Գ.

Երուսաղէմայ սարը մէ ծառ կայ,
 Ծառի վրայ մէ ճուղկ կայ,
 Ճըղկի վրայ մէ բուն կայ,
 Բնի մէջը մէ ձու կայ,
 Չվի մէջը մէ ձաք կայ,
 Յաճկ ունի, ապիկ է,
 Մազ ունի, գրօղ է,
 Յակռա ունի արագի,
 Օցն քթի, օցը մէրի,
 Չար յաճկը, չար փուշ պատի,
 Չար նիաթը տրաքի:

Ե.

Յուսին-յուսին,
 Ի սուրբ կուսին.
 Մայրամ գնաց,
 Որթին հուսին,
 Էրէված էմ,
 Խօրոված էմ,
 Ա՛ռ դանակը,
 Կրտրէ չար յաճկը.
 Չար յաճկը՝
 Չար փուշ պատի,
 Չար նիաթը՝ տրաքի:

Բացի աղթելուց, գիւղացիները չար
 աչքից, կամ թշնամի մարդու շառից ազա-

տուելու համար, դիմում են նաեւ հետեւեալ միջոցին. « Զար աչք » ունեցողի զգեստի ծայրից գաղտնի կտրում են մի փոքրիկ կտոր եւ հիւանդի ոտաթաթերի մէջտեղը դնելով՝ այրում:

2. Աչքի հատի աղօթքներ: Զահարմահալում կան նաեւ « աչքի հատի աղօթքներ, որոնց մէջ գիւղացիների բժշկական հասկացողութիւններն են երեւան գալիս: Այսպէս օրինակ. երբ մէկի աչքի մէջ բծեր (հատեր) են գոյանում, բժշկելու համար դիմում են հետեւեալ միջոցին. տասներկու աղջիկներ հաւաքւում են եւ ջրով լի մի աման դնում հիւանդի աչքերի առաջ եւ մէջը գցում են « օխտը » տեսակ սերմեր՝ ցորեն, գարի, ոսպ, բրինձ, հաճար, սիսեռ, կտաւահատ. յետոյ հիւանդի գլխին գցում են մի ծածկոց. ապա աղջիկներ/ց մէկը մի կտոր գաղ (վառելիք) է վառում եւ երեք անգամ հիւանդի գլխին բռնելով՝ շնչում է հետեւեալ աղօթքը.

Հաւն ի թառն,
Հատն ի ջուրն.
Հալի հատը,
Ընկնի ջուրը:

Այնուհետեւ նոյնը կրկնում են միւս աղջիկները եւ այսպէս ուղիղ եօթն օր, օրպէս զի « աչքի հատն » անցնի...

Ոմանք էլ այս աղօթքն են ասում.

Խլէզ Խօրասան,
Կարիճ դաւաղան,

Օցն ի լուծ ,
 Թօխմն ընկոցը ,
 Աստղն ընկոցը ,
 Հատն հալոցը ,
 Տէր մէյ Յիսուս-Քրիստոս ,
 Ամէն :

3. Վար ու ցանքի աղօթքներ: Չահար-
 մահալի գեղջկական բանահիւսութեան մէջ
 ուշադրութեան արժանի են նաեւ վար ու
 ցանքի աղօթքները, որոնց մէջ ցայտուն կերպով
 երեւում է, թէ ինչպէս հայ գեղջուկը սերտ
 կերպով կապուած է իր հող ու դաշտին,
 սիրում է իր եզն ու արօրը, վար ու ցանքը:
 Նա մի առանձին սրբութեամբ է մօտենում
 դէպի իր աշխատանքը, յատկապէս դէպի վար
 ու ցանքը, որը գիւղացու միակ յոյսն է, նրա
 գոյութեան միակ հիմքը, ուստի ամենաառաջին
 սերմը ցանելիս՝ գիւղացին աղօթում է.

Անումն ի Աստծուն ,
 Տէր Աստուած քու ումուտիցը՝
 Դու տաս բարաքաթ ,
 Տաս աճութուն ,
 Որ բոլոր յերգնային թռչուններն ,
 Եւ յերգրային սողուններն ,
 Ուտեն ,
 Բազմեն ,
 Հատանան ,
 Եւ նրանց ավէլնորդն ,
 Մենք նվաստներս ուտենք ,
 Ու փառաբանենք՝
 Հօր Աստծուն :

կամ՝

Անունն ի Աստծուն,
 Դու տաս յաջողում.
 Էս մէ բուռն անցիւորականի,
 Էս մէգն էլ թռչուններին,
 Էս էլ աղքատներին.
 Ըռլուն-թռլուն,
 Կերէք իմ ցանածից,
 Կշտացէք,
 Եւ իմ ցանածին՝
 Բարաքաթ ասէք:

9. Քաղի երգեր:

Քաղի երգերից մեր ձեռքը հասել է միայն մի փոքրիկ կտոր, որը կարելի է ասել գեղջկական յաջող նուագներից մէկն է: Ամառ է. դաշտեցի հնձուրն արտն է իջել եւ աշխոյժ եռանդով, մանգաղի զնգոցի հետ, հասուն խուրձերը գլորում է գետին, իսկ ժրաջան նանը առաւօտ վաղ թոնիր է վառել, լաւաշ թխել, կարագ շինել, սեղան պատրաստել եւ յոգնած բալին տուն է կանչում.

Քամուն գալիս հով ու հալին,
 Նանը զուրբան էրնած կալին.
 Չէռիդ մանգաղ՝ կապուտ բիստի,
 Ղօլդէն ձեռդ ե՛կ հանգստի:

Ափսոս սակայն, որ այս բովանդակութեամբ հիւսուած ուրիշ երգեր չկան: Նոյնպէս Չահարմահալցիներին անծանօթ են վարուցանքի

ժամանակ մաճկալների երգած հօրովելները, որոնցով այնքան հարուստ են վանայ, Ակնայ, Արճէշի, Խնուսի, Բորջալուի եւ այլ գաւառները: Այդ հանգամանքը, ի հարկէ, պիտի վերագրել գիւղացիների տնտեսական ծանր եւ անմիջիժար դրութեան: Հին, աւատական կարգերի տակ հեծող ու հարստահարող ժողովուրդը՝ սիրտ չունի երգելու...

10. Մանկական խաղեր ու երգեր:

Հայ ժողովրդական գրականութիւնը մանկական խաղերի ու երգերի տեսակէտից այնքան էլ հարուստ չէ. այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ գաւառներում եւ գիւղերում գոյութիւն ունեցող ժողովրդական մանկական խաղերից ու երգերից շատերը՝ մինչեւ այսօր էլ դեռ չեն հաւաքուած, որով մեր գրականութիւնն այդ ուղղութեամբ խիստ տխուր մի պատկեր է ներկայացնում, եթէ միայն ի նկատի չառնենք այն հատ ու կտորները, որոնք լոյս տեսան մի քանի ազգագրական հանդէսների մէջ:

Մանկական մի քանի խաղեր եւ երգեր գոյութիւն ունեն նաեւ Չահարմահալում, որոնցից առանձին ուշադրութեան արժանի են հետեւեալները. 1. Հատիկ-հատիկ, 2. Նուրին, 3. Թունդիր-թունդիր եւ 4. Տէր-Օվանէս: Տեսնենք ամեն մէկն առանձին.

1. Հատիկ-հստիկ: 4—8 երեխաներ գետնի վրայ նստած՝ շրջան են կազմում եւ իրենց ձեռքերը դնում մի տեղ, իրար կշտի, ապա երեխաներից մէկն իր ձեռքի ցուցամատը կարգով դպցնում է նրանց ձեռքերին եւ արտասանում.

Հատիկ, հատիկ,
 Ուտուլ մատիկ.
 Չար խնձորիկ,
 Չար փշատիկ,
 Նա մէր անի,
 Նա կուտ ուտի.
 Աւագն ասի.
 Պաշիկ անի,
 Դուռը բանա,
 Դուս անի:

Ոտանաւորն ո՛ւմ ձեռքի վրայ որ վերջանում է, նա յետ է քաշում իր ձեռքը, եւ այսպէս շարունակւում է մինչեւ ամենավերջին ձեռքը: Վերջում ո՛ւմ ձեռքը, որ մնում է, նա մէջքի վրայ կռանում է, իսկ միւս երեխաները իրենց ձեռքերը միմեանց վրայ դնելով՝ դարսում են նրա մէջքին: Եթէ ենթակայ երեխան իր մէջքի վրայ դարսուած ձեռքերից ամենավերջին ձեռքի ո՛ւմ պատկանելը ճիշդ է ասում, ազատւում է, եթէ ոչ՝ պատժւում է:

2. Նուրիւն: Նուրին ջրապաշտական շրջանի նշխարներիցն է: Երաշտ ժամանակ երեխաները մի աւելի երկար շոր են հագցնում եւ խրտուիլակ շինում, ապա շրջելով տները երգում.

Նուրին-նուրին էկէլ է,
 Շալէ շաբիք հաքէլ է.
 Քօլքէ գօդիք կապէլ է.
 Մեր նուրինի փայլ տուէք,
 Ուտենք, խմենք, քէֆ անենք.
 Անձրէվ, անձրէվ ցած արի,
 Բուսցրու ցօրէն ու գարի:

Տնեցիները ամանով ջուր են ածում Նուրինի գլխին եւ երեխաներին էլ մի բուռ ցորեն, ալիւր կամ ձու եւ իւղ են տալիս:

3. Թունդիր-թունդիր: Երկու երեխաներ կանգնում են դէմ դիմաց. նրանցից մէկը, որ կոչւում է թունդրատէր, երկու ձեռքերը բանալով՝ մատների ծայրերն իրար է կպցնում, իբր թէ սանդուխ է կազմում, իսկ միւս երեխան իր ցուցամատը դնում է սանդուխի առաջին աստիճանի՝ երկու ճկոյթների վրայ եւ ասում.

— Թունդիր, թունդիր, կրակ տուր:

Թունդրատէրը պատասխանում է.

— Վիրեւի թառը:

Խօսակիցն իր ցուցամատը բարձրացնում է սանդուխի երկրորդ աստիճանը, այսինքն միացեալ մատնեմատների վրայ, ուրնայն է կրկնում եւ այսպէս մինչեւ ցուցամատների գլուխը, ուր թունդրատէրն ասում է.

— Կրակը թունդիրն է, կուս կէցի՝ հանէ:

Այնուհետեւ խօսակցութիւնը երկուսի մէջ տեղի է ունենում հետեւեալ կարգով.

- Գէլ չկայ:
- Օնչինչ չկայ:
- Ըղվէս չկայ:
- Օնչինչ չկայ:
- Չաղալ չկայ:
- Օնչինչ չկայ:
- Շիր ու փալանգ չկայ¹:
- Օնչինչ չկայ:

Խօսակիցն սկսում է հաց թխել:

Թունդրատէրն ասում է.

- Եախնի դիր:

Խօսակիցն եախնի է դնում թունդիրը եւ ասում.

- Վայ, մաշիկս նի ընգաւ:

Թունդրատէրը պատասխանում է.

- Առա կէցի, հանէ:

Խսակիցն փոսի մէջ է իջեցնում ձեռքը, որ մաշիկը դուս բերէ, թունդրատէրը յանկարծ հաջելու ձայներ է հանում՝ «հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ», որպէս զի խօսակիցն վախենայ:

Շատ անգամ էլ աղջիկ ու տղայ միասին են խաղում:

4. Տէր-Օվանէս: Հետաքրքրական է նաեւ Տէր-Օվանէսը. մի խումբ մանուկներ ձեռք ձեռքի բռնած՝ կազմում են կիսաշրջան, որի երկու ծայրերին կանգնողները նշանակւում են

¹ Տալիս է վայրենի կենդանիների անունները, ինչ-քան որ յիշում է:

մեծաւորներ՝ «մէրեր», Ապա երկու մէրերի մէջ տեղի է ունենում հետեւեալ խօսակցութիւնը.

- Տէր-Օվանէս:
- Պատրուքուկէս¹:
- Զուռնօվ էրթամ թէ դափով:
- Դափով:

Դրա վրայ մէրերից մէկը նւ նրա մօտի ընկերները ձեռքերնին բարձրացնում են, իսկ միւս մէրը «դափ, դափ, դափ» ասելով՝ իր ընկերների հետ գնում, անցնում է նրանց ձեռքերի տակից, որի ընթացքում մէրի մօտ կանգնած մանուկի ձեռքերը խաչաձեւում են: Այնուհետեւ երկու մէրերը միմեանց հետ խօսում են այսպէս.

- Յաճկդ լուս, օր տղա իս բերի:
- Յաճկի լուսօվ ապրես, բարօվ կապեւ կարմիրը:

Ապա նորից է շարունակւում խաղը, մինչեւ որ բոլոր մանուկները մէջք մէջքի խաչաձեւ կապուած մի շարք են կազմում, որով երկու մէրերը դէմդիմաց են գալիս: Դրանից յետոյ երկու մէրերի մէջ տեղի է ունենում հետեւեալ խօսակցութիւնը.

¹ Գիւղի ծերունիների ասելով՝ Նոր-Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքի մօտ ապրել է Չահարմահալցի մի քահանայ Տէր-Օվանէս անունով, որն իր շրջապատի մէջ ունեցել է մեծ ազդեցութիւն, որով ժողովուրդը նրան կոչել է պատրուքուկէս, այսինքն պատրիարքի կէս ազդեցութիւն ունեցող:

- Արի էրթանք դադի :
- Չվան չունեմ :
- Չվանդ կուտամ :
- Հաց չունեմ :
- Հացդ կուտամ :
- Ղաթըխ չունեմ :
- Ղաթըխ կուտամ :
- Զուր չունեմ :
- Զուրն ածա՛ չանախդ :
- Զվանս կառճ է :
- Քաշէ յինչուդ օր յերգնայ :

Վերջին խօսքի վրայ երկու կողմից սկսում են քաշել եւ իւրաքանչիւր կողմն աշխատում է միւս կողմը դէպի իրեն քաշել : Ո՛ւմ ձեռքը, որ պոկւում է հանգոյցից, նրա աչքերը կապում են եւ ծեծում, մինչեւ որ նա բռնում է մէկին եւ ազատւում :

Բացի յիշեալ խաղերից, մանուկներն ունեն նաեւ մի քանի երգեր : Այսպէս՝ աղջիկներն արեւածագին ասում են .

Յարէ՛վ, յարէ՛վ, դուս արի ,
 Հէրն ու մէրդ էկէլ էն .
 Թուր ու թֆանք բերէլ էն ,
 Գօմշի վօդը կօտրէլ էն .
 Խմորը քացախէլ է ,
 Թունդիրը խշակէլ է ,
 Էրէխէն էլ լացէլ է :

կամ՝

Լուսացաւ , լուսացաւ ,
 Լուսն ի բարին ,
 Սէղան տարան ,
 Սուրբ Նաղարին .
 Ղուրբան իմ ախպօր պաղարին :

Չահարմահալի աղջիկը պարզ գոյներով
պատկերացնում է իր դրութիւնը.

Ես ախշիգ եմ,
Շատ զանազան եմ,
Կը նշանովեմ՝
Սուլթան ու խան եմ.
Կը պսակովեմ՝
Քօռ տրիժան եմ:

Մանչ ու աղջիկ մանուկները միմեանց
ասում են.

Գէտի ջուրը լամ տալէն,
Էրկու խնձօր ծապ տալէն.
Կարմիր կօվը մսացու,
Կանանչ խառէն քիսացու,
Ես քու նանին հարսնացու,
Դու իմ նանին փէսացու:
Կամ՝

Արի էյթանք մէյ քուչէն,
Տակդ գցենք խալիչէն,
Թափ տանք ծառի ալուչէն:

11. Հէքեաթներ:

Չահարմահալի ժողովրդական գրականու-
թեան մէջ ուշագրաւ տեղ են բռնում նաեւ
հէքեաթները, որոնք կազմուել են որոշ ժամա-
նակաշրջաններում եւ իրենց հիւսուածքով ըն-
դարձակ տեղ են գրաւում գեղջկական արտա-
դրութիւնների մէջ: Բայց նախ քան նրանց մասին
խօսելը, ծանօթանալք հէքեաթների կազմուածքի
եւ տեսակների հետ:

Հէքեաթները մեծ մասամբ մտացածին, առասպելական հերոսների, թագաւորների, իշխանների, դիւցազների, աժդահանների, վիշապների, դեւերի, հուրի-փերիների եւ վերջապէս կենդանիների եւ թռչունների շուրջ՝ ֆանտաստիկական պատկերներով հիւսուած ժողովրդական զրոյցներ են, որոնց ստեղծած աշխարհը իրական կեանքի հետ շատ քիչ յարաբերութիւն ունի։ Նրանք իրենց ծագումով ու բովանդակութեամբ շատ հին են, որովհետեւ նախ՝ առաջ են եկել դիցաբանութիւնից եւ երկրորդ՝ մեծամասնութեամբ պարունակում են իրենց մէջ խորին հնութեան հետքեր եւ յիշեցնում մեզ նախնական ժամանակները, երբ մարդիկ իրրեւ թոյլ եւ խաւար արարածների՝ չհասկանալով իրենց շրջապատի երեւոյթներն ու պատահարները, դողում ու ականածում էին եւ նրանց գերբնական, աստուածային կերպարանք տալիս։ Այդ պատճառաւ էլ Հէքեաթներն իրենց բովանդակութեամբ բազմազան են։ Յաճախ մենք հանդիպում ենք դիւցաբանական Հէքեաթների, որոնք իրենց մէջ կրում են առասպելական տարրեր, այսպէս են այն Հէքեաթները, որոնց մէջ գործող անձերը վիթխարի ու յաղթանդամ հսկաներ եւ դիւցազներ են, որոնք պատերազմում են ահելի օձերի, վիշապների, դեւերի, ոգիների եւ խաւարի դէմ, յաղթում նրանց եւ հասնում իրենց նպատակին, կամ գործող անձեր հանդիսանում են բնութեան երեւոյթները, օր. ամպ, կայծակ, քամի, լուսին,

արեգակ եւ այլն: Կան մի շարք հէքեաթներ
եւս, ուր իբրեւ գործող անձեր, հերոսներ դուրս
են գալիս կենդանիներն ու թռչունները եւ
մարդկանց նման խօսում են, գործում, որոնք
ունեն իրենց ինքնուրոյն հայեացքները, դիտո-
ղութիւնները, սովորութիւնները, նիստ ու կացը,
նոյնիսկ իրենց ժողովները (օր. Մկենբրի ժողովը),
թագաւորը, թագուհին, բանակը, զօրապետները,
թիկնապահները եւ այլն: Ընդհանրապէս այսպիսի
հէքեաթների գլխաւոր հերոսները կազմում են
աղուէսը, գայլն ու արջը. աղուէսը՝ խորամանկ,
ճարպիկ, խաբերայ, չարասիրտ եւ անհաւա-
տարիմ, գայլը՝ ագահ, շատակեր, անբարեսիրդ՝
եւ տխմար, իսկ արջը՝ հզօր: Բացի սրանցից՝
հերոս-կենդանիներ են նաեւ առիւծը, շուշը,
կատուն, մուկը, օձը. թռչուններից՝ աքաղաղը,
արծիւը, կռունկը եւ այլն: Կենդանական հէ-
քեաթների մէջ երեւան են գալիս նաեւ մոխրա-
կատար մկիկը, յաչքը փուք ընդան ճտիկը,
մոխրաթաւալ էշիկը եւ այլն:

Կան այնպիսի հէքեաթներ էլ, ուր հերոս-
ներն աչքի են ընկնում իրենց ազնուութեամբ,
գեղեցկութեամբ եւ բարի գործերով. նրանք
պատժում են չարերին եւ իրենց նպատակն
իրագործելու համար դիմում են զանազան մի-
ջոցների, օր. թեւաւոր հրեղէն ձի են նստում
եւ իրենց հետ վերցնում անմահական խնձոր,
ջուր, կաթ կամ կախարդական հայելի, սանդր
եւ կամ հրեղէն սուր, նետ, կայծակի թուր եւ
այլն: Ղերջապէս կան մի շարք ծաղրաշարժ եւ

կենցաղական հեքեաթներ վերցրած ժողովրդի անցեալ եւ ներկայ ընտանեկան եւ ընկերական առօրեայ կեանքից:

Պէտք է ասել, որ յիշեալ հեքեաթներից շատերի մէջ կան բազմաթիւ բարոյական-խրատական տարրեր եւ նրանցից շատերը երեխաների համար ընթերցանութեան ընտիր նիւթ են պարունակում եւ կարող են նպաստել մանուկների մտաւոր եւ բարոյական զարգացմանը, ուստի նրանք եւ դաստիարակչական կարեւոր նշանակութիւն ունեն, միայն անհրաժեշտ է լաւագոյններն ընտրել եւ մշակել: Այդ ուղղութեամբ արդէն բաւական մեծ աշխատանք կատարուած է թէ՛ եւրոպական եւ թէ՛ արեւելեան ազգերի գրականութեան մէջ: Մեր ասածին ապացոյց կարող են ծառայել այն բազմաթիւ հեքեաթները, որոնք հաւաքուելով՝ մշակուած եւ հրատարակուած են առանձին գրքերով: Այսպէս՝ Գերմանական գրականութեան մէջ յայտնի են «Գրիմ եղբայրների հեքեաթները», Ռուսների մէջ՝ Ժուկովսկու եւ Պուշկինի մշակած հեքեաթները, Գանիացիների մէջ՝ «Անդէրսընի հեքեաթները», Անգլիացիների մէջ՝ Կիպլինգի «Հտպիտին գիրքը», իսկ մեր մէջ հեքեաթներ հաւաքել եւ մշակել են հետեւեալ բանահաւաքները. — Գարեգին եպիսկ, Սրուանձտեանցը հաւաքել է Վանեցւոց հեքեաթները, Գէորգ Շէրենցը՝ Մշեցւոց, Տիգրան Նաւասարդեանը՝ Երեւանցւոց, Տէր-Աղէքսանդրեանը՝ Թիֆլիզեցւոց, Լ. Սարգսեանը՝ Ագուլեցւոց, Ալա հավերդեանը՝

Զէյթունցւոց եւ այլն: Յայտնի են նաեւ «Ազգագրական հանդէս»ի մէջ լոյս տեսած հէքեաթները:

Ընդհանրապէս հէքեաթ պատմողներն ալեւոր «պապիկներն» ու պառաւ «մամիկներն» են (թէեւ կան յատուկ հէքեաթաբաններ, որոնք պատմելու առանձին շնորհք ունեն), որոնք սկսում են «Լինում է, չի լինում» կամ «Կար, չկար» եւ կամ «Եղել է, չէ եղել» նախաբանով, իսկ վերջացնում են «Աստուծոց յիրեք խնձոր ընդաւմէկն ասողին, մէկը լսողին, մէկն էլ յանգաջ դնողին» բնորոշ խօսքերով:

Չահարմահալում եւս, ինչպէս ասեցինք, կան մի շարք հէքեաթներ, որոնք շրջում են գիւղացիների բերանում եւ աւանդւում սերընդից սերունդ. դրանք մեծամասնութեամբ դրացի պարսիկներից փոխ առնուած եւ առասպելական բնոյթով հիւստւած հէքեաթներ են, որոնք մինսեւ այսօր էլ մեծ հաճոյքով են պատմւում եւ լսւում գիւղացիների մէջ: Նրանց մտադիր ենք հաւաքելու յարմար պատեհութեամբ:

Տեղական հէքեաթներից մենք գրի առինք ընդամենը երեք հատ. — Օխտը մուկը, Պառաւն ու էծը եւ Բուռուկէս, որոնք իրենց կազմուածքով եւ բովանդակութեամբ աւելի ինքնուրոյն են, աւելի հարազատ եւ ցոյց են տալիս ժողովրդական շարահարութեան ճարտար հիւստւածք: Տեսնենք իւրաքանչիւրն առանձին, առանձին:

Ա.

ՕԽՏԸ ՄՈՒԿԸ¹

Օխտը մուկ ին էլի, ալուր ին կիտի ու ֆառ ին քցի. ընդէլ էր պստի մկին: Էն էլ էրթում է, օր խմօր անի՝ ընդնում է խմօրի մէջն ու սատկում է: Վեցց մուկն օր տէհում են՝ ֆիքր են անում, ֆիքր են անում, մօխրակատար են ըլնում: Մէ դանա ճնջուղ դալիս է, նստում է բաշին ու էդ մկանուն ասում է.

— Մուկ ախպրտանք, չմարէք մօխրակատար էլի:

Մկանուց մէգն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկին ասեմ.
Բա չէս գիտի,
Մկան ու պստիկը սատկէլ է:

Ճնջուղը ֆիքր է անում, ֆիքր է անում,
յաճկը փուք է ընդնում, էրթում է նստում է մէ ծառի: Ծառը հարցնում է.

— Այ ճնջուղ յաճկդ յո՛ւր է փուք ընդի՝
ճնջուղն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկին ասեմ,
Յաճկը փուք ընդան ճըտիկն ասեմ.
Բա չէս գիտի,
Մկան ու պստիկը սատկէլ է:

¹ Յիշեալ հէքեաթները հաւաքելիս՝ աջակցել է մեզ ընկի Չարհարմահալցի պր. Մանասէր Տէր-Սարգսեանը, որին յայտնում ենք մեր անկեղծ զգացմունքների հաւաստիքը:

Ծառը ֆիքր է անում, ֆիքր է անում,
տէրեւը վեր է տալիս: Մէ էծ գալիս է ծառի տակը
յարձէլու, տէհում է ծառը տէրեւը յիստազ վեր
է տվի, հարցնում է ծառիցը.

— Այ ծառ, տէրեւդ յո՞ւր ես վեր տվի:
Ծառն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընգան ճըտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ.
Բա չէս գիտի,
Մկան ու պստիկը սատկէլ է:

Էծը ֆիքր է անում, ֆիքր է անում, պողը
կօտրում է: Էնդստէն էրթում է գէղը, օր ջուր
խմի, գէղը տէհում է իծու պողը կօտրուէլ է,
հարցնում է.

— Այ էծ, պողդ յո՞ւր է կօտրվի:
Էծն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընգան ճըտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ.
Պող կօտրվան իծիկն ասեմ.
Բա չէս գիտի,
• Մկան ու պստիկը սատկէլ է:

Գէղը ֆիքր է անում, ֆիքր է անում, յա-
րուն է քանդում: Մէ ախչիգ գալիս է գէղիցը
ջուր լցնի, տէհում է գէղն յարուն է քանդի,
հարցնում է.

— Այ գէղ, յո՞ւր ես յարուն քանդի:
Գէղն ասում է:

Որն ասեմ, որն ասեմ,
 Մօխրակատար մկիկն ասեմ,
 Յաճկը փուք ընգան ճըտիկն ասեմ,
 Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
 Պող կօտրվան իծիկն ասեմ,
 Յարուն քանդան գէդիկն ասեմ.
 Բա չէս գիտի,
 Մկան ու պստիկը սատկէլ է:

Ախշիգը ֆիքր է անում, ֆիքր է անում,
 կուժը կպչում է հուսիցը ու տուն է գալիս: Պա-
 ռաւ նանն օր ջահրա մանէլիս է ըլնում, հար-
 ցընում է.

— Ա՛յ ախշիգ, կուժդ յո՞ւր է կպի հուսիցդ:
 Ախշիգն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
 Մօխրակատար մկիկն ասեմ,
 Յաճկը փուք ընգան ճըտիկն ասեմ,
 Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
 Պող կօտրվան իծիկն ասեմ,
 Յարուն քանդան գէդիկն ասեմ,
 կուժ հուս կպան ախշիգն ասեմ.
 Բա չէս գիտի,
 Մկան ու պստիկը սատկէլ է:

Պառաւը ֆիքր է անում, ֆիքր է անում,
 մանիջը կպչում է ձէռիցը: Էս պառաւը էրթում է
 ժամ: Ժամվօրը տէհում է ու հարցնում է.

— Ա՛յ պառաւ, մանիջդ յո՞ւր է կպի ձէռիցդ:
 Պառաւն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
 Մօխրակատար մկիկն ասեմ,
 Յաճկը փուք ընգան ճըտիկն ասեմ,
 Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,

Պող կօտրվան իծիկն ասեմ,
 Յարուն քանդան գէդիկն ասեմ,
 Կուժ հուս կպան ախչիգն ասեմ,
 Մանիջ կպան ձէռիկն ասեմ.
 Բա չէք գիտի,
 Մկան ու պստիկը սատկէլ է:

Ժամվօրը ֆիքր է անում, ֆիքր է անում,
 յիրար է կպչում:

Աստծուց յիրեք խնձօր վեր ընդաւ, մէգն
 ասողին, մէգը լսողին, մէգն էլ յանգաջ դնողին:

Բ.

Պ Ա Ռ Ա Ի Ն Ո Ի Է Ժ Ը

Մէ պառաւ է ընում, մէ էծ է ունէնում:
 Մէդ օր պառաւն էտ էծը կթում է ու կաթը
 դնում է սալգի տակը ու ինքը երթում է ժամ:
 Ինչուր ետ է գալիս, մէ աղվէս է գալիս ու էտ
 կաթն ուտում է: Պառաւը ջգրվում է ու կպչում
 է աղվսի պոչիցն ու ասում է.

— Աղվէս ախպէր, կաթս տուր:

Աղվէսը երթում է իծու մօտ ու ասում է.

Էծ ախպէր, ինձի մէ քիչ կաթ տուր,
 կաթը տանեմ տամ պառվին,
 Պառաւը պոչս վիլ անի,
 Էրթամ շարուխ-մարուխ կռծէլու:

Էծն ասում է.

— Հալա մէ քիչ տէրեւ տուր, ուտեմ:

Աղվէսն երթում է ծառի մօտ ու ասում է.

Այ ծառ, ինձի մէ քիչ տէրեւ տուր,
 Տէրեւը տանեմ տամ իծուն,
 Էծն ինձի կաթ տայ,
 Կաթը տանեմ տամ պառվին,
 Պառաւը պոչս վիլ անի,
 Էրթամ չարութիւն-մարութիւն կռծէլու:

Ծառն ասում է.

— Հալա մէ քիչ ջուր տուր, խմեմ:

Աղվէսն էրթում է ախպրի մօտն ու ասում է.

Այ ախպուր, ինձի մէ քիչ ջուր տուր,
 Զուրը տանեմ տամ ծառին,
 Ծառն ինձի տէրեւ տայ,
 Տէրեւը տանեմ տամ իծուն,
 Էծն ինձի կաթ տայ,
 Կաթը տանեմ տամ պառվին,
 Պառաւը պոչս վիլ անի,
 Էրթամ չարութիւն-մարութիւն կռծէլու:

Ախպուրն ասում է.

— Հալա ախշգնէրուն ասա՛, գան դօվըս
 խաղան:

Աղվէսն էրթում է ախշգնէրու քով ու ասում է.

Այ ախշգնէր, արիք ախպրի դօվըրը խաղցէք,
 Ախպուրն ինձի ջուր տայ,
 Զուրը տանեմ տամ ծառին,
 Ծառն ինձի տէրեւ տայ,
 Տէրեւը տանեմ տամ իծուն,
 Էծն ինձի կաթ տայ,
 Կաթը տանեմ տամ պառվին,
 Պառաւը պոչս վիլ անի,
 Էրթամ չարութիւն-մարութիւն կռծէլու:

Ախշգնէրն ասում են .

— Հալա օսկերիջին ասա՛, մէղի մատնի տայ :

Աղվէսն էրթում է օսկերիջի մօտն ու ասում է .

Ա՛յ օսկերիջ, ինձի մէ դանա մատնի տուր,
Մատնին տանեմ տամ ախշգնէրուն,
Ախշգնէրն էրթան ախպրի դօվըը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
Էծն ինձի կաթ տայ,
Կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծէլու :

Օսկերիջն ասում է .

— Հալա ինձի մէ ձու տուր :

Աղվէսն էրթում է հաւի մօտն ու ասում է .

Ա՛յ հաւ, ինձի մէ ձու տուր,
Ձուն տանեմ տամ օսկերիջին,
Օսկերիջն ինձի մատնի տայ,
Մատնին տանեմ տամ ախշգնէրուն,
Ախշգնէրն էրթան ախպրի դօվըը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
Էծն ինձի կաթ տայ,
Կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծէլու :

Հաւն ասում է .

— Հալա կուտ տուր, օր ուտեմ :

Աղվէսն էրթում է դմբի մօտն ու ասում է.

Ա՛յ դումբ, ինձի կուտ տուր,
 կուտը տանեմ տամ հաւին,
 Հաւն ինձի մէ ձու տայ,
 Չուն տանեմ տամ օսկերիջին,
 Օսկերիջն ինձի մատնի տայ,
 Մատնին տանեմ տամ ախշգնէրուն,
 Ախշգնէրն էրթան ախպրի դօվըը խաղան,
 Ախպուրն ինձի ջուր տայ,
 Ջուրը տանեմ տամ ծառին,
 Ծառն ինձի տէրեւ տայ,
 Տէրեւը տանեմ տամ իծուն,
 Էծն ինձի կաթ տայ,
 Կաթը տանեմ տամ պառվին,
 Պառաւը պոչս վիլ անի,
 Էրթամ չարուխ-մարուխ կռծէլու:

Դումբն ասում է.

— Հալա ինձի մէ քիչ կու տուր:

Աղվէսն էրթում է գօմշի մօտ ու ասում է.

Ա՛յ գօմէշ, ինձի մէ քիչ կու տուր,
 կուն տանեմ տամ դմբին,
 Դումբն ինձի կուտ տայ,
 կուտը տանեմ տամ հաւին,
 Հաւն ինձի ձու տայ,
 Չուն տանեմ տամ օսկերիջին,
 Օսկերիջն ինձի մատնի տայ,
 Մատնին տանեմ տամ ախշգնէրուն,
 Ախշգնէրն էրթան ախպրի դօվըը խաղան,
 Ախպուրն ինձի ջուր տայ,
 Ջուրը տանեմ տամ ծառին,
 Ծառն ինձի տէրեւ տայ,
 Տէրեւը տանեմ տամ իծուն,
 Էծն ինձի կաթ տայ,

կաթը տանեմ տամ պառվին,
 Պառաւը պոչս վիլ անի,
 Էրթամ չարուխ-մարուխ կռծէլու:

Գօմէշն ասում է.

— Հալա ինձի զամիշ տուր ուտեմ:

Աղվեսն էրթում է շամբը, մէ փօշտա զամիշ
 է բաղում ու բերում է տալիս է գօմշին, յէնչաղը՝

Գօմէշը կու է տալիս,
 կուն տալիս է դմբին,
 Դումբը կուտ է տալիս,
 կուտը տալիս է հաւին,
 Հաւը ձու է տալիս,
 Չուն տալիս է օսկերիջին,
 Օսկերիջը մատնի է տալիս,
 Մատնին տալիս է ախշգնէրուն,
 Ախշգնէրը էրթում են ախպրի դօվըը խաղիս են,
 Ախպուրը ջուր է տալիս,
 Զուրը տալիս է ծառին,
 Ծառը տէրեւ է տալիս,
 Տէրեւը տալիս է իծուն,
 Էծը կաթ է տալիս,
 կաթը տալիս է պառվին,
 Պառաւը պոչը վիլ է անում,
 Էրթում է չարուխ-մարուխ կռծէլու:

Աստծուց յիրեք խնձօր վեր ընգաւ. մէգն
 ասողին, մէգը լսողին, մէգն էլ յանգաջ դնողին:

Գ.

ԲՈՒՌՈՒԿԷՍ

Մէ մարթ է ըլնում, մէ կնիգ է ունենում:
 Մէգ օր կնիգը մարթուն ասում է.

— Այ մարթ, գնա քաղաք, մէ հալիմ գրիք
 առ, բի:

Մարթն ասում է. հալա մէ թիքայ հաց
տուր ուտեմ. կնիգն ասում է.

— Լաւ է, գնա, հիմի եղ գուքաս:

Մարթու ճարը կտրվում է, էրթում է քա-
ղաք, հալիմդրիք առնում է ու բերում է տուն:
Անիգն ասում է.

— Այ մարթ, որչանք ձաւար կըտանի:

Մարթն ասում է.

— Չեմ գիտի:

Անիգը յուշունց է տալիս մարթուն եւ յեղ է
ղրկում՝ տիրոջն մօտ, օր յիմանայ, տէսնի որչանք
ձաւար կը տանի: Մարթը յեղ է էրթում ու հարց-
նում է կճուճ ծախօղին: Կճուճ ծախօղն ասում է.

— Բուռուկէս:

Մարթը «Բուռուկէս, բուռուկէս» ասելէն
տուն է վերադառնում, օր մտէն չընկնի: Ճամիին
դուչար է ըլնում մէ մարթու, օր ցանք է անում:
Ցանքվօրը հէնց յիմանում է, օր էտ իրա ցանքի
հմար է ասում, բնա է անում էտուր ծէծէլը, թէ
յո՛ւր ես ասում բուռուկէս:

Մարթն ասում է.

— Բա ի՞նչ ասեմ:

Ցանքվօրն ասում է.

— Ասա՛. մէգը հըզար անի:

— Մարթը «մէգը հըզար անի, մէգը հըզար
անի» ասելէն դալիս է, հասնում է մէ քանի հօքու,
օր մէ մեռել են տանում թաղէլու:

Էտ մարթիքը հէնց յիմանում են, օր էտ
իրանց մեռլի հմար է ասում մէգը հըզար անի, բնա

են անուամբ էտուր ծէծելը, թէ յո՞ւր ես ասում մէզը
հըզար անի:

Մարթն ասում է.

— Բա ի՞նչ ասեմ:

Մարթիքն ասում են.

— Ասա՛. էս մէզն ըլնի, էլ չըլնի:

Մարթը “էս մէզն ըլնի, էլ չըլնի, էս մէզն
ըլնի, էլ չըլնի” ասելէն գալիս է, հասնում է մէ
հաշնքի: Հաշնքի մակարնէրը հէնց յիմանում են,
որ իրանց հաշնքի հմար է ասում՝ բնա են անում
ծէծելը ու ասում են.

— Ասա՛. յամիշա էդ ձեր բանն ըլնի:

Մարթը “յամիշա էդ ձեր բանն ըլնի, յա-
միշա էդ ձեր բանն ըլնի” ասելէն գալիս է, հաս-
նում է մի քանի հօքու, որ ախպ են դուս քցում:
Մարթիքը հէնց յիմանում են, որ իրանց ախպ դուս
քցելու հմար է ասում՝ բնա են անում էդ խեղճ
մարթուն ծէծելը, թէ դու յո՞ւր ես ասում յամիշա
էդ ձեր բանն ըլնի:

Մարթն ասում է.

— Բա ի՞նչ ասեմ:

Մարթիքն ասում են.

— Էլ օնչինչ մի ասի, կուսէ կուս գնա:

Մարթը կուսէ կուս գալիս է, հասնում է
դաքավորի ջօրէքուն, որ չինի բառցած տանում են:
Ջօրիքը տէհում են թէ չէ՝ խռտնում են ու բէռ-
նէրը տալիս գէդին ու ջարթու փշուր են անում:
Դաքավորի մարթիքը բռնում են էտ մարթուն ու
տանում են, զընդընում: Ջընդընի մէջ էտ մարթը
բնա է անում իրան, իրան խօսալը.

Ասի. բուռուկէս, ծէծէցին,
 Ասի. մէզը հըզար անի, ծէծէցին,
 Ասի. էս մէզն ըլնի, էլ չըլնի, ծէծէցին,
 Ասի. յամիշա էդ ձեր բանն ըլնի, ծէծէցին,
 Կուսէ կուս էկայ, ծէծէցին:

Յեփօր դաքավօրի մարթիքը էս բանը լսում են, էրթում են դաքավօրին թարիֆ են անում: Դաքավօրը հրամայում է, օր էդ դիժ մարթուն դէն անեն: Դաքավօրի մարթիքը դէն են անում էտուր ասելով.

— Կուսէ կուս մի էրթայ, գլուխդ շախկ պահէ ու դնա:

Մարթը դունչը ցցած գալիս է, հասնում է իրանց տան շէմքին. հէնց իտէնց ուզում է նի էրթայ տուն, գլուխը գիր է անում բալավարին: Ճվում է կնգան ու ասում է.

— Ա՛յ կնիգ, ղաղմէն տէհում, իզա բալավարը քանդեմ, նի գամ:

Կնիգն ասում է.

— Դէ կուս կէցի ու նի արի,

Մարթն ասում է.

— Զիլնի, դաքավօրը ղադաղան է արի:

Կնիգը ղաղմէն տալիս է մարթուն. մարթն էս ասում բալավարը քանդում է, օր նի գա, տէհում է վախիլ մէ բօռ է դուս գալիս ու նստում է կնգայ ճակտին. մարթը ղաղմօվ տալիս է բօռին, օր սատկի, կպչում է կնգայ ճակտին ու բօռի տեղ կնիգն է մեռնում:

Աստծուց յիրեք խնձօր վեր ընգաւ. մէզն ասողին, մէզը լսողին, մէզն էլ յանգաջ դնողին:

12. Հանելուկներ:

Հանելուկները կենդանական, բուսական՝ կրօնական, ծաղրական եւ այլ բովանդակութեամբ եւ չափական ձեւով հիւսուած կարճ մտքեր են, որոնց մէջ փոխաբերական իմաստով նկարագրուում են մի քանի առարկաներ ու երեւոյթներ, որոնցով ժողովուրդը յայտնագործում է նրանց բովանդակած գաղափարը:

Մեզանում հանելուկների ծագման պատմութիւնը բաւական հին է: Է՞րդ դարից սկսած՝ նրանք մեր գրականութեան մէջ երեւան են գալիս: Նոյն դարի գիտնական Անանիա Շիրակացին է, որ առաջին անգամ շարահիւսում է «Բախճան» խորագրով հանելուկներ: Ապա, ԺԲԷ դարի ամենամեծ կրօնաւորը՝ Ներսէս Շնորհալին գրում է ժողովրդի բարբառով 120 հանելուկներ, ժողովրդի զուարճութեան համար: Այնուհետեւ գրականութեան այս նոր տեսակը մեզանում հետզհետէ մշակւում է, ընդարձակւում եւ սիրելի դառնում ժողովրդին, ինչպէս է եւ այժմ: Յետագայում մեր բանասէրներն առանձին ուշադրութիւն են դարձնում հանելուկների վրայ եւ հաւաքում ժողովրդի բերանում շրջող հանելուկներից շատերը, այնպէս որ հայ ժողովրդական գրականութիւնն այսօր այդ տեսակի գրուածքներով բաւական հարուստ է: Բայց արեք Արիստակէս վարդ. Տէր-Սարգսեանի «Պանդուխտ վանեցին», Գէորգ Տիգրանեանի «Առածք, ասացուածք եւ զրոյցք»-ը,

Հ. Ս. Խ. Իւթիւճեանի «Բիւրակ»ը, Երուանդ
 Լալայեանի «Աղգագրական հանդէս»ը, Սարգիս
 հայկունու «Ժողովրդական երգ, առած, հանելուկ»ը եւ այլն եւ դուք նրանց մէջ պիտի
 գտնէք հայաբնակ զանազան քաղաքների եւ
 գիւղերի հանելուկները, որոնց բովանդակած
 առարկաներն ու երեւոյթներն են օր. ամպ,
 անձրեւ, կարկուտ, ձիւն, սառոյց, քամի, փո-
 թորիկ, արեգակ, լուսին, աստղ, գիշեր, ցերեկ,
 արշալոյս, առաւօտ, ջուր, աղբիւր, լիճ, գետ,
 ծով, ովկիանոս, հող, արօր, գութան, տուն,
 կով, ոչխար, կաթ, սքաղաղ, հաւ, ձու, ձի, ուղտ,
 էշ, օձ, գլուխ, աչք, բերան, մօրուք եւ այլն:

Չահարմահալի բանաւոր գրականութեան
 մէջ եւս կան բազմաթիւ հանելուկներ, որոնք
 յօրինել, շարադրել են հէնց իրենք գիւղա-
 ցիները բերանացի եւ բերանացի էլ աւանդել
 են սերնդից սերունդ: Այդ հանելուկները, որոնք
 գիւղացիների սրամտութիւնն են զարգացրել
 եւ մի եւ նոյն ժամանակ նրանց մտքի հնարա-
 գիտութեան նպաստել՝ մեծ մասամբ պարզ,
 բայց բաւական գեղիցիկ հիւսուածքներ են:

Ընդհանրապէս դրանք, ինչպէս հայկական
 միւս հանելուկները, սկսում են «Էտ ի՞նչն
 է» բնորոշ բառերով: Այժմ առաջ բերենք
 եղածները:

Էտ ի՞նչն է՝

Պստի կճուճ,

Համօվ ապուր (բնկոյղ):

Անջուր ջաղաց,
Անկրակ բաղաջ (ձեղձի բաղարջ):

Մութը մարաք,
Լիքը տաշէղ (բերան):

Չխկի-չխկի մկրատը,
Յամմէն բանի հասրաթը (դրամ, փող):

Յերգան աղիք,
Ծերը ծաղիգ (ճրագ):

Դափը դըրըփոց,
Մէջը խառկոց (հրացան):

Ալ եղնիք, պալ եղնիք,
Կանգնած, պաշարած եղնիք (պատ):

Յերգար-յերգար յարտերը,
Մէջն ալաչայ բտնդերը (սանդուխք):

Յերգար հոր,
Մէջն ալվալա խնձօր (ձեծ պաս):

Մանէն ման արած,
Պատին կախ արած (ճախարակ):

Մութն տուն,
Բռջիք քուն (թոնիր):

Պստի բօխչայ,
Մազէ բուռգայ (աչք):

Վարմիր ուտեմ (ցորեն) } (ջրաղաց):
Ճերմագ ածեմ (ալիւր) }

Ընի՛ր ըռծեմ գնեմ,
Չնի՛ր կռծեմ գնեմ (ասեղ թելել):

Ինքն է մէ թիղ,
Քանու՛մ իս էրկու թիղ (պարսկական գրչաման):

Բոլոր-բոլոր մէջը ծակ,
Էշ ես, թէ չասես գրդագ (գլխարկ):

Կարմրցնեմ՝ բուռդ գնեմ,
Ճէրմգցնեմ՝ ծակդ գնեմ (Զատկական ձու):

Իստի պուպուղ, ինդի պուպուղ,
Մարթաքանց յառաջը պուպուղ (ղալեան):

Ունի, ունի, բուն ունի,
Ճնջըղի կտուց ունի (սիսեռ):

Աուն էկաւ, լնթ ին էկաւ,
Խորողակից մէ մարթ էկաւ (դոյլ):

Կարմիր ձիավոյր,
Դէղին դաքվօր,
Ճէրմագ շապկավոյր (փշատ):

✓ Աբրէշում խալին փռած է,
Նռան տանը շարած է,
Օսկօվ ջամբ կօռծած է (երկինք):

✕ Փէդ ունի, նաջառի բան չէ,
Ալուր ունի, նաղչի բան չէ,
Կարմիր է, բազազի բան չէ (փշատ):

Քէզի ղըգեմ կունդուլ քարի,
Օխտը ծակ վրէն շարի,
Մահնին գրդի, վէկալ արի (գլուխ):

Էլին-էլին, դրին սէլին,
Տարան-բերին, օսկոռ տանր թաղէցին,
Յարունը գեղը բաժնէցին (խնոցի):

Մէ զադ ունեմ ունդուլ է,
Ջուխտ յանգըջին կունդուլ է,
Մէկ զիլ է ու մէկ թուլ է (գորտ):

Ուլանոց, ուլ պրտանոց,
Վարմիր քթոց, չըխ չըխկանոց (նուռ):

Անօլոր գէրցան,
Անծակ մարքրիդ,
Տէրը տվէց,
Բանդէն կտրէց (խաղող):

Իմ ըռնագը,
Քու կըռնագը,
Իմ սուլուլը,
Քու դըռծակը (աղօրիք):

Տամ խփին,
Ընգնի շըռթին,
Սեւ օխչըրին,
Քշկուլ հաւին (ձուածեղ):

Լարը լար,
Էրկթէ լար,
Մէ ջուխտ հըլուն,
Էրթալ ու գալ (աչքեր):

Մէ զադ ունեմ, զադ չէ,
Արօջ կօնի, տավար չէ,
Չու կօծի, հաւ չէ,
Հարամ է ու հալալ չէ (կրեայ):

Կաւէ կօլօլակ (տաշտ),
 Մսէ ճօլօլակ (կովի պտուկը),
 Դէղին դաքավօր (դաւ),
 Ճէրմագ հալիվօր (կաթ)

(դաւ):

Մէ զադ ունեմ՝
 Էկու հօղին (ոտքերը),
 Էրկու կօղին (թեւերը),
 Էրկու վզզիչ (աչքերը),
 Մէ բղբղիչ (կտուցը)

(հաւ):

Մէ զադ ունեմ՝
 Չոյս հօղէն (ոտքերը),
 Ութը կօղէն (պտուկները),
 Էրկու վզզիչ (աչքերը),
 Մէ տըմբտմբիչ (պոչը),

(շուն):

13. Առածներ եւ ասացուածներ:

Առածները կարճ ու կտրուկ չափական զրոյցներ են, որոնց մէջ ժողովուրդն արտայայտում է մի ճշմարտութիւն կամ փիլիսոփայական մի հայեացք, իսկ ասացուածքները պարզ սրահսօսութիւններ են, որոնց ժողովուրդը գործ է ածում, երբ ուզում է այլաբանօրէն իր միտքն արտայայտել:

Թէ առածները եւ թէ ասացուածքներն արդիւնք են հայ ժողովրդի դարեւոր փորձառութեան ու սրամտութեան եւ որոնց գլխաւոր նպատակն է իրենց մէջ պարունակած բարոյական կանոններով ժողովրդին փորձառութեան բովից անցկացնել:

Հայ ժողովուրդը մինչեւ օրս էլ սրբութեամբ պահել է իր նախնիքներից աւանդմնացած առածներն ու ասացուածները եւ նրանցով էլ առաջնորդւում է նա իր կեանքի զանազան հանգամանքներում, ինչպէս օր. վիճաբանութիւնների, վէճերի, բանակուիւնների եւ նոյնիսկ հասարակ խօսակցութիւնների ժամանակ:

Առած-ասացուածները մեղանում բաւականին հաւաքուած են: Դեռ 1843 թուականներից սկսած՝ նախ «Բազմավէպը» եւ ապա «Կոռնկը» (շնորհիւ ֆոյարեանի) հրատարակում են հատ ու կտոր առած-ասացուածքների: Դա գործի սկիզբն էր: Այնուհետեւ շուտով զարկ է ստանում, եւ ահա կարճ միջոցում, շնորհիւ մեր քանքարաւոր բանասէրների, լոյս են տեսնում բազմաթիւ ուշադրութեան արժանի առածներ եւ ասացուածքներ: Այդ ուղղութեամբ մեր բանահաւաքներից հայ ազգագրութեան գնահատելի ծառայութիւն մատուցել են Հ. Գարր. Այվազեան, Հ. Ա. Պարտիզակցի, Տ. Նաւասարդեան, Սարգիս Հայկունի, Տէվկանց, Դ. Շէրէնց, Հ. Ս. Ծուլարտեան, Գ. Տէր-Աղէքսանդրեան, Յ. Ալլահվէրդեան, Երուանդ Լալայեան, Արիստակէս վարդ. Տէր-Սարգսեան, Մ. Աբեղեան, Յովհ. Խօջայեան եւայլն, որոնք խնամքով հաւաքել եւ հրատարակել են զանազան գաւառների եւ գիւղերի առած ասացուածները:

Չահարմահալի բանահիւսութեան մէջ եւս կան մի շարք առածներ եւ ասացուածներ, որոնց

Մէջ երեւան են գալիս գիւղացիներ ընտանեկան,
 հասարակական կեանքն ու աշխարհայեացքները:
 Դրանցից մենք կարողացանք հաւաքել ընդա-
 մենը 98 հատ, որոնք այսօր անգիր շրջում են
 գեղջուկների բերաններում: Տեսնենք:

Անշիգը մօրը քը քաշի ու տղէն հօրը:

Աղտ է բաղի, թէ մաղըդ:

Աղու հաց՝ սիրտը բաց:

Աղվէսն իրա պոչն է շահդ բռնում:

Աղքատ՝ հպարտ:

Անճարը կուտի բանջար:

Աշխարքը դժագ է ու մարթը դանագ, կտրի
 ու ուտի:

Առուտուր է, յափ ու կուլ խօ շէ:

Ասծու պահած դառը, գէլը չի տանի:

Բանդ բուրթ է:

+ Գեղ գղեն, գաւառ մանեն, անումը ճար-
 տարին լինի:

Գեղ կանգրի, գերան քկօտրի:

Գեառոտ էծն ախպրի տկիցն է ուզում

ջուր խմի:

Գէլն ինչ կուղի, մէ թիֆան քշեր:

Գժի աղունն Աստուած կաղայ:

Գիլու գլխին ավէտարան կարթցին, ասաւ. թէզ
 արէք, գեալէս գնաց:

Գողը գողից գողացաւ, Աստուած վերելը
 զարմացաւ:

Գողն ինչ կուգէ, մութը քշեր:

Դառը դադէց, մահրում կէրաւ:

+ Դարբնին դանակ չիլնի, դերձակին պատանք:

Դուսը քահանայ, տունը սատանայ:

Եղը կանգրէցնում են, տկիցը հորթ են

քաշում:

Եղըն օր վեր ընգնի, դանգվօրը քշատնը:

Բ Ես աղա ու դուն աղա, բա մեր աղունն
օվ կաղա:

Ես բրթեմ ու դու խրթես:

Ես քու ումուդօվ, դու Ասծու:

Ես քու հմար, դու ում հմար:

Երգքնիցը ինչ գա՝ գէդինի տակն է:

Էրէխէն մհանայ, նանը կշտանայ:

Էրկաթը գանի տակ է քծեծեն:

Էշն ինչ գիտի՝ նուշն ինչ է:

Էշ հեծնէլը մէ բան է, ցած գալը մէ անում:

Էտ մէ ըխտ է, օր փաքինի դռան քշօքի:

Ըխտին ասին. շլինքդ յուն է ծուռը, ասաւ.

ինչս է շիդագ:

Ըխտին գդալօվ ես ջուր տալիս:

Ըխտի խաղը կարմնջին գուքայ:

Ինծի պահէ բօխչա միշում, քեզի պահեմ

մարթա միշում:

Իմացողին մէգ ասա, չիմացողին հըզար:

Իմն յաչի, ով կուզի թող հաջի:

Ինչ իլիկն է, ինչ պիլիկն է, ինչ նախարան
է, ինչ իր կնիգն է:

Ինչ օր ցանես, էն քհնէս:

Լիքը գնացիր, դարդագ էկար:

Խառնիչ աղանձ, կարասի մուկ:

Խելքդ հացիդ հեդ կէրէլ ես:

Խելքը մենձ ու պստկի չէ:

Խէվին խրատն ինչ կօնի, սէվին սապոնն
ինչ կօնի:

Խօսքէրը վերցնէս ու իրանց կրակէս (պարսիկ-
ներին համար են ասում):

Ծառ չես օր քամու չդիրչի:

Ծուռն ախոսը մենձ եզիցն է:

Կատուին ասին. հէրդ է լաւ, թէ մէրդ,
ասաւ, նաու, նաու:

Կատուի գիրը միս չնգաւ. ասաւ, յէսօր
Ուրբաթ պաս է:

կարմիր կօվի պէս կթվեցիր, կթվեցիր ու էն
դողէն տվիր, շուռ տվիր:

կեր ու խումղ փրի հետ, առուտուրդ օտա-
րի հետ:

կուժը ջրի ճամփին քը կօտրվի:

կուժ քե ասեմ, փառչ դու լսէ:

+ Հաստ ու բարագ մէ գին է, վայ բարագ
մանօղին:

Հաց ու պանիր քիչ դիր ու շատ ծամիր:

Հէնց գիդի հացի ծալը հալվայ կայ:

Հինգ մատիցդ օր մէզը կտրէս, յարուն դուս
գուքայ:

Չեռը ձեռ կշանչնայ:

Չին ու ջօրին կովեցին, էշը մէջտեղ ոտա-
տակ կերաւ:

Չուզը գլխիցն է հօտած:

Չուզը ծովում քմենձնայ:

Ճրաքը տաշտի տակը, դուռը չի լուս տայ:

+ Ման արած, պատին կախ արած:

Մեխկը լալով, պարտկը տալով:

Մէ ձեռը ձեռ քվլայ, էրկուսը յէրէս:

Մէգ եմ ու բէգ եմ:

Մէզը մէգին մէ բաղ տվեց, մէզը մէգին մէ
ծաղիգ չտվեց:

Մէզը մէգով, էրկուսն Աստծով:

Մէգ օր բարի բարգէնթաք, մէգ օր սէվով

սնգութաք:

Մկան ձեռը ջաղցին օքնէ:

Մուկն իր դռան առիւծ է:

Մօյթէ քու մօզին, մի էրթայ դուռն ի պօզին:

Յամմէն ծաղիգ իր հոտն ունի:

Յամմէն մարթ իր թթու չի ասի:

Յամմէն մարթ կրակն իրա բաղջի տակն է

քաշում:

Յամմէն օր ջուրը գէրան չի բէրի:

Յամիշա տէյտէրը ձիթով գաթա չի ուտի:

Յարունն յարնօվ չեն վայ:
 Յեթումի տէրն Աստուած է:
 Յէրէս են տուի, աստառ իս ուզում:
 Յէրէսը հանց սլի-բլի, տկէ հանց սուր ածելի:
 Յինչուդ դուռը շտաս, չեն բանայ:
 Յինչուդ էրէխէն չայ, մէրը ծիծ չի տայ:
 Յինչուդ շուշանը զարթուի, ժամէրը կար-
 ցադիլի:

Յինչուդ չգայ յէդինը, չի յիշուի յառչինը:
 Յունքը շինելու տեղ յաճկն էլ քօռացրի:
 Շատ դադօղին շալէ շապիք, քիչ դադօղին
 զառ շապիք:

Շունը շան միս չի ուտի:
 Շունը շնէն, էրկուսը մէ տնէն:
 Շունը տանը ք. քաշի, հարսը կէսերը:
 Ուխտը հէձէլ ես կուսէ կուս ես ման գալիս:
 Ոչ դու ինձի ասա քօռ, ոչ ես քէղի ասեմ
 քաշալ:

Ուստայ էն է, օր գլուխն է էկի:
 Պառաւը մեռաւ, տեղը լէնցաւ:
 Ջուն ասա ու ջան լսէ:
 Քօռն ինչ կուզի, էրկու յաճկ:

14. Օրհնանքներ:

Չահարմահալում գիւղացիները հիւսել
 են նաեւ մի շարք օրհնանքներ, դրանք մեծա-
 մասնութեամբ պարզ, բայց գողտրիկ բարեմաղ-
 թութիւններ են կեանքի, արեւշատութեան,
 աշխատանքի, ճանապարհորդութեան եւ այլն:
 Գիւղացիներն իրենց առօրեայ կեանքում հա-
 մարեա միշտ արտասանում են այդ օրհնանք-
 ները, այն հասկացողութեամբ, որ առանց նրանց

մարդ յաջողութիւն չի ունենար եւ իր գործերն
էլ յաջող չեն ընթանար: Օրհնանքներ ասելը
գիւղացիները բարոյական պարտականութիւն են
համարում: Այդպէս են եղել նահապետական
բոլոր ազգերը: Նրանց բերաններից օրհնանք-
ները մեղրի նման ծորել են: Այդ ենցոյց տալիս
մեզ ազգագրական հրատարակութիւնների ու-
սումնասիրութիւնները: Այդպէս է եւ այսօր
Չահարմահալի ժողովուրդը:

Շրջեցէք գաւառի բոլոր գիւղերը, մտէք
գիւղացիների մէջ, մասնակցեցէք նրանց ճա-
շերին, խնջոյքներին, անգամ աշխատանքներին
եւ դուք պիտի լսէք մի շարք օրհնանքներ եւ
բարեմաղթութիւններ: Ահա դրանք:

Ազիզդ ապրի:

Ախպէրդ ապրի:

Ապրի արեւդ:

Ապրի որթիքդ:

Ասծանիցդ առնես:

Աստուած գալոց ղաղէն փրգի:

Աստուած քէզի արեւշատութուն տայ:

Աստուած քէզի ղոչ որթի տայ:

Աստուած քէզի ղայիմ ձէռով պահի:

Աստուած քէզի չարից փրգի:

Աստուած քու գործին աջողութուն տայ:

Աստուած քու ծերութունն օռհնի:

— Աստուած քու կալ ու կտին բարա-

բաթ տայ:

Աստուած քու հօրն ու մօրն ու ախպրտանցդ
շատ պահի:

Աստուած քու ձէռը չկառճցնի:

Աստուած քու որթիքն զօրացնի:

Աստծու ձէռք քու վրայ ըլնի:
 Բարցդ բարի ըլնի:
 Բարով կապես խիզանիդ կարմիր-կանանչը:
 Բարով մաշես, էդ հին ըլնի, հզար նոր:
 Գնա օր հացդ տաք ըլնի, ջուրդ սառն ըլնի,
 Վօդդ քարին չառնի, մատդ փուշ չպատի:
 Դուշմնի սրդով չլնի:
 Դու քու սրդի վայէն հանես:
 Է՛յ դու զօրանաա:
 “Ինչ անեմ” չունենաա:
 Խէր տեսնես քու ումր ու յարէվիցն:
 Ծլես, ծախկես, հարուր տարէկան ըլնես:
 Հայր Ապրամայ օռհնութունը տուն ու
 տէղիդ վրայ ըլնի:
 Հզար տարէկան ըլնես:
 Ճէրմկամիրունք ըլնես:
 Ճէրմկավարս ըլնես:
 Մենձընաք ու ծերանաք:
 Մեռոնի օռհնութունը խիզնիդ յարէվին
 ըլնի:
 Միշտ դուռդ բաց ըլնի ու օջաղդ բարդա-
 րար ըլնի:
 Յաճկի լուսով կենաա:
 Յաչ էրթաս յաչ ըլնի, ձախ էլ էրթաս
 յաչ ըլնի:
 Որթով ու թօռնով զարդարվես:
 Ումրդ շատ ըլնի:
 Պատարագի օռհնութունը կանանչ յարէ-
 վիտ ըլնի:
 Վադ օր չտեսնես:
 Վադ օրդ հարսնիք, կնունք ըլնի:
 Վերջիդ օրն բարի ըլնի:
 Վօդդ քարին չառնի:
 Օստը տղի հէր ըլնենաա:
 Օստը որթով սէղան նստես:
 Օղորմի հօրդ:

15. Անէծքներ եւ հայհոյեանքներ:

Չահարմահալի անէծքներն ու հայհոյեանքները միասին ենք հաւաքել, որովհետեւ անէծքներն ուրիշ բան չեն, եթէ ոչ մեղմ հայհոյեանքներ: Դրանք գործադրուում են թէ տղամարդկանց եւ թէ կանանց կողմից, բարկութեան, թշնամութեան, հակառակութեան, բանավէճերի եւ նման հանգամանքներում: Թէ անէծքները եւ թէ հայհոյեանքները, ի հարկէ, արդիւնք են նրանց տգիտութեան: Քաղաքակիրթ ազգերի մէջ, իրերի բնական ընթացքով, հետզհետէ վերանում, նուաղում են հայհոյեանքները, անէծքները, սպառնալիքները, երդումները եւ այլն: Սակայն, ընդհակառակը, այն երկիրներում, ուր դեռ անյաղթելիօրէն խաւարն ու տգիտութիւնն են իշխում, այնտեղ հայհոյեանքները, երդումները, անէծքները եւ այլն սովորական երեւոյթներ են: Այդպէս է այսօր ամբողջ արեւելքը, ինչպէս եւ նրա միօղակը կազմող Սպահանի Չահարմահալ գաւառը: Ահա մեր հաւաքածները:

Ազիզդ օրն ազիզ օր մեռնի:

Աղուհացս յաճկէրդ բռնի, ծնկնէրդ ծալի:

Անգուման դարդի գաս, բիդուման ցաւի:

Անհաղորթ ըլնես:

Անումդ քարին գրվի:

Աշխար մթնի գլխիդ:

Ասծու կրակը գայ գլխիդ:

Ասծու պեծը գայ գլխիդ:

Արմատտ անիծեմ:

Բալամ Բալամ մեռնես :
 Բէրանդ կտրատվի :
 Բոր ունէնաս, զուեդ շունէնաս :
 Բուգուռուց դարդի գաս :
 Բոյըդ հողը գնեմ :
 Գէդինը մտնես :
 Գլուխդ գէդին չէր էկի :
 Գնայ օր քու եղօվ տապկվես :
 Գրօղը բարթդ տանի :
 Գրօղի փայ ըլնես :
 Գօռ չգտնես :
 Դէղին դանակ ուտես :
 Դիրքըդ գնեմ :
 Դիւագիդ չհասնես :
 Դու էլ շինես, անումդ էլ :
 Էրկու յաճկօվ քօռ նստես :
 Թիքումդ գդնես :
 Թրի դամ էրթաս :
 Լաչիգդ քամուն տանի :
 Խաչած գէրեղման չմգնես :
 Խէր չտէսնես քու ումր ու յարէվիցը :
 Խիզանի յէրէս չտէսնես յիսկի ժուկ ու
 ժամանակ :
 Խուզվիս, պլօկվիս, լուչկվիս :
 Ծամդ կտրվի :
 Ծնունդդ անիծվի :
 Կարմիր գուլուլ ուտես :
 Կրակ լուսանայ գլխիդ :
 Կռնէրուդ միտն ուտես :
 Հէրդ անիծեմ :
 Հինէդ քամուն տանի :
 Հօքիդ սադանէքը տանէն, լաչդ մօլէքը :
 Հողը հաւորվես :
 Չէռդ կօտրվի :
 Ճերմակ թաթլիգի յէրէս չտէսնես :
 Մազդ կտրվի :

Մենձ ու պատիգդ անիծվի:
 Մէ թայ մաշկով օխտը դուռ էրթաս:
 Մէռելդ անիծվի:
 Մէր Մայրամայ ծնունդ չկանգնես:
 Միրունքդ կտրվի:
 Մուր ու լէղի ուտես:
 Մռմնվօր նստես:
 Յաճկդ դուս գա:
 Յաճկդ յերէսիդ քօռ նստի:
 Յաճկիդ լուսը ճէրմկի:
 Յարնոտ շորէրդ էր էկի:
 Ումր ու յարէվիցդ եդ նստես:
 Ոչ մենձնաս:
 Ոչ հուսդ բանցրանայ:
 Չիր ճնգացի:
 Պտուկ չիր բռնի:
 Զանիդ վրայ ծակ ծակ դարդ հանես:
 Զահէլ ջուննամմարդ ընես:
 Ռիշէդ մուխ ընի:
 Սաղ ու սատկածիդ գօռէն շուն դուս գայ:
 Սավադդ գեղնի յերէսէն կտրվի:
 Սիդդ թուլանայ:
 Սիդդ քլոր-քլոր գա:
 Սուրգուն ընես:
 Սքվօր նստես:
 Սեւ ախշիգ, սեւ տղայ, սեւ կնիգ, սեւ մարթ:
 Սեւ լաշիգ քցես:
 Սեւ ու կապուտ, մութն ու մէլ նստես:
 Սեւ օրթընած:
 Սոյդ անցրնի:
 Վայէդ փորդ մնայ:
 Վօդդ կօտրվի:
 Տանդ փէյն բուռգայ ընի:
 Տանդ մէշն շմեռնես:
 Տէյտէրի կաբքը քէզի գունտ ու կծիկ ածի:
 Քէզնից քէզի հանդիբի:

Օխտը պողոտէ կրակվի,
Օրփէ վէրնաս:
Օցի օսկոռ ուտես:

16. Երդումներ:

Չահարմահալցիները սովորաբար երգում են Աստծոյ, Քրիստոսի կամ Նոր-ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի եւ կամ իրենց եկեղեցիների ու նրանց մէջ գտնուող սրբազան առարկաների այն է աւետարանի, խաչի, մեռնի անուններով: Կան եւ այլ տեսակ երգումներ «լուս հաւատքի», «կանանչ յարէվի» ու սրբերի անուններով: Ահա նրանց երգումների բեկորները.

Ախպոյս յարէվը:
Անյաճկի լուս մնամ, թէ սուտ ասեմ:
Գիդի Աստուած:
Գօռ չգդնեմ:
Ես գիդէնամ ու վերեւիս Աստուածը:
Էն խաչը:
Էն կանանչ մեռնը:
Ըն ավէտարանը:
Իզա աղուհացը:
Իզա աղուհացին քօռակ տամ:
Իզա ժամը:
Իզա կանգրած յարէվը:
Իզա մայր էգեղէցին:
Իմ յարէվը:
Իմ ու քու Աստուածը:
Լուս հաւատք:
Խէր չտէսնեմ իմ ումը ու յարէվիցն ագէր
սուտ ասեմ:
Խիզանիս յարէվը:

Խիղանիցս խէր շտէսնեմ:
 Հօրս գէրեղմանը:
 Մէխկիդ տէր ընեմ:
 Յիսուսն է վգայ:
 Հուրուշկանանց ավետարանը:
 Պարտականդ ընեմ քեզ ու քու օխտը
 պօռտին էլ:

Սուրբ Ամենափրգիչը:
 Սուրբ Օհաննէսի գլուխը գիդօղ:
 Տաճար թունդիրը:
 Տան յէրէս շտէսնեմ:
 Տէյտէրի կարբը:
 Տէյտէրի ձէռի խաշը:
 Տղէքանցս թաղեմ:
 Քու կանանչ յարէվը:
 Քրիստոսը:
 Քրիստոս առէք կէրէքը:
 Քրիստոսի չար մէխողն ընեմ:

17. Սպառնալիքներ:

Չահարմահալցիներն իրենց բարկութեան,
 թշնամութեան, զայրոյթի եւ նման վայրկեաններու-
 րում, բացի հայհոյեանքներից ու անէծքներից,
 արտասանում են նաեւ մի շարք սպառնալիքներ:
 Դրանցով կարծես նրանք մի կերպ վրէժ են
 լուծում իրենց հակառակօրդներից եւ հանգս-
 տացնում իրենց ներքին ալեկոծուած աշխարհը:
 Ահա մեր ձեռք բերած սպառնալիքները.

Բահօվ միջէդ քրկիսեմ,
 Իերանդ առճիճ քըհալեմ:
 Գօռդ քըփօրեմ:
 Դիվանի ձէռք քըդնեմ, օր տունդ կրակէն,
 Խիղանդ տանէն:

Էկայ՝ անհաղորդ կօնեմ:
 Էկայ՝ հէնց կուտամ, օր հաւիպէս թուպուտաս:
 Էկայ՝ մենձ թիքէդ յանգաջդ քըշինեմ:
 Էկայ՝ միսդ մաղաշով վեր քըհանեմ:
 Էկայ՝ նաշդ քըփռեմ:
 Էկայ՝ սօխի պէս գլուխդ դուրս քըքաշեմ:
 Էկայ՝ փէտով կուտամ մեռնիսը:
 Էկայ՝ փորդ քըվիթեմ:
 Էկայ՝ տախտակի վերայ բանդ-բանդ քըջօկեմ:
 Թէ իտէնց շարի՞, հօրս կըռնըդիցը չեմ:
 Թէ մեռար գուգամ գօղիդ քացի կուտամ:
 Լեզուդ ծօծրկօվդ քը հանեմ:
 Կաշիդ քըքանդեմ, դարման կօխ կուտամ:
 Կարմիրդ քըկապեմ:
 Հէրըդ գօռէն քը հանեմ:
 Մազէրդ ջօրու պօշից քը կապեմ:
 Մեռելդ քըկրակեմ:
 Մի խօսա, Էկայ՝ քըթաղեմ:
 Յաճկէրդ շանգլօվ քըհանեմ:
 Յարունդ շուշէն կօծեմ:
 Չկարծես թէ ես ֆլանաքեասն եմ, ան-
 պատիւ կօնեմ:
 Զուխտ յաճկիդ լուօր քըհանեմ:
 Սպանէլու դուռը քըտանեմ:
 Վայ քու հալին, եթէ հասսայ, վերջիդ
 օրն է:
 Վրայ գլխիդ կախ կուտամ հօրը:
 Փէդի տակ քըջօրցնեմ:
 Քարկօծ կօնեմ:

18. Մնտորիապաշտութիւններ եւ Նախա-
պաշարումներ:

Ինչպէս հայաբնակ շատ գաւառներում
 եւ գիւղերում, այնպէս էլ Չահարմահալում

Հայ գիւղացիների մէջ կան բազմաթիւ սնոտիա-
պաշտութիւններ եւ նախապաշարումներ, որոնք
արդիւնք են հայկական հնաւանդ հասկացո-
ղութիւնների ու աշխարհայեցողութիւնների:
Այդ հաւատալիքները գիւղացիների առօրեայ
կեանքում որոշ դեր են կատարում եւ ընթացք
տալիս նրանց կեանքի այս կամ այն երեւոյթներին:

Սնոտիապաշտութիւնների եւ նախապա-
շարումների ծագման պատմութիւնը շատ հին է
մեզանում: Գեռ քրիստոնէութիւնից առաջ,
հեթանոսութեան շրջանում, Հայերն ունէին
զանազան հաւատալիքներ, որոնց մասին մեզ
տեղեկութիւններ է տալիս Եզնիկ Վողբացին իր
«Ընդդէմ Աղանդոց»-ի երկրորդ մասում, թէ
երբ մարմնի վրայ մի տեղ միս խաղայ, ձի
հեծնելու, գեղեցիկ զգեստ հանգնելու կամ
ծեծ ուտելու նշան է. թէ երբ ոտքը կամ ձեռքը
քոր գայ, ճանապարհորդութեան կամ բան
տալու եւ առնելու նշան է եւ այլն: Չահարմա-
հալի սնոտիապաշտութիւնները, իրենց բովան-
դակութեամբ, մեզ Հայ հեթանոսական հաւա-
տալիքների բեկորներն են յիշեցնում: Այժմ
առաջ բերենք եղածները.

Եթէ բուն մէկի տան կտրից բւայ՝ գուշա-
կում են, որ այդ տանից մէկը պիտի մեռնի:

Եթէ շունն ոռնայ կամ հաւն աքաղաղի պէս
կանչէ՝ գուշակում են, որ մեծ վտանգ պիտի պա-
տահի:

Եթէ կատուն հիւանդի անկողնի վրայ
պառկի՝ հիւանդը կառողջանայ:

Երբ կատուն իր ձագին ծննդկանի մօտ բերի՝
 ձագը ծննդկանի ցաւը կը տանի:

Եթէ կաշաղակը տան վրայ կռկռայ՝ գուշա-
 կում են, որ ուրախ լուր պիտի ստանան:

Կատուի երգիքից նայելը հիւր գալու նշան
 են համարում:

Շան խոտ ուտելը՝ էփանութեան նշան:

Էշի ծնուած քուռակի ճակատն ուղիտակ լի-
 նելը յաջողութիւն է կամ ձախորդութիւն:

Օձի շապիկը դնում են երեսայի բարձի մէջ,
 որպէս զի վտանգ չպատահի:

Երբ կովի կաթը նուազում է՝ աղօթել են
 տալիս:

Եթէ մէկի աջ աչքը խաղայ՝ յաջողութիւն
 կը պատահի, իսկ եթէ ձախը՝ ձախողութիւն:

Եթէ մէկի գարշապարը, ափը կամ գլխի
 մէջտեղը քոր գայ՝ փող կամ նամակ կը ստանայ:

Եթէ մէկի ականջը ձայն է տալիս, գուշա-
 կում է, որ մէկը իրեն բամբասում է, ուստի տալիս է
 ծանօթների անունները, ում անունն վրայ որ
 ձայնը կտրւումէ, ասում է. նա է:

Թոնրից հանած ամենաառաջին հացը երե-
 խային չեն տալիս, որպէս զի առաջին կնիկը չմեռնի:

Հացը թոնրայ կողքին խփելիս՝ երբ ձայն
 է հանում, գուշակում են, որ մէկն իրինց
 բամբասում է:

Հաց թխելիս խոնչի վրայ թափուած ալիւրը
 յետ չեն վերցնում, այլ ւծում են թոնիրը, որով-
 հետեւ մեղք է:

Նոր հացը թխում են՝ դեռ հինը չվերջացած,
 որպէս զի տան բարաքեաթը չկտրուի:

Մաղած ալրի եւ խմորի վրայ խաչ են քա-
 շում, որպէս զի Աստծոյ բարաքեաթը վրան լինի:

Ջատկական նշխարքը ալրի մէջ են պահում,
 որպէս զի օրհնուած մնայ:

Խմորը գնդելիս՝ երբ ցած է ընկնում, գու-
շակում են, որ հիւր կը գայ:

Գիշեր ժամանակ ալիւր, աղ, ձու, կրակ փոխ
չեն տալիս, որպէս զի տան բարաքեաթը չգնայ:

Ճանապարհորդի ետեւից չեն կանչում, որ-
պէս զի անվտանգ հասնի:

Երբ հիւրը տանից գնում է՝ տունը չեն
աւելում, որպէս զի նա անվտանգ իր տեղն հասնի:

Եթէ մի կին երեխայ չի ունենում, տանում
են ջրաղացը եւ գլխին ալիւր ածում, կամ պարսկի
գերեզմանի վրայ դրուած առիւծանման քարի վրայ
երեք անգամ նստեցնում են եւ կամ որ եւ է Հայի
գերեզմանի շուրս կողմից հող վերցնելով՝ ածում
են կնոջ մէջքին, որպէս զի երեխայ ծնի:

Ծննդկանը քառասունքի ժամանակ երեխայի
բարձի տակ մի աման ջուր, մի ակիշ եւ մի ասեղ
է դնում, որպէս զի վտանգ չի պատահի:

Հիւանդի գլխավերեւում չեն նստում, որ
շուտ առողջանայ:

Եթէ մէկը տենդ է ունենում, ննջեցելի
դագաղի առջեւից երեք անգամ անցնում է, որ
տենդը կտրուի:

Եթէ մէկը մի անգամ փռնչտայ՝ անյաջո-
ղութիւն կը պատահի, իսկ եթէ երկու՝ յաջո-
ղութիւն:

Եթէ մէկը պանդուխտ է ունենում, ձեռքով
«թիզ» է բաց անել տալիս, որպէս զի իմանայ,
թէ սիրեկան զարիպն երբ կը վերադառնայ:

Երբ մէկի ատամը դուրս է գալիս, տանում
գցում է թոնրի սնդուկը եւ ասում.

Ա՛ռ քեզի օսկէ ակռայ,
Տուր ինձի մկի ակռայ:

Գիշերով ջուր խմելիս՝ ասում են. «Հայր եւ
որդի հոգին սուրբ»:

Յօրանջելիս խաչակնքում են, որպէս զի սա-
տանան իրենց բերանը չմտնէ:

Կտրուած եղունգը փողոց են թափում, որպէս
զի տունը չհարամուի:

Էրեկոները մաստակ չեն ծամում, որով-
հետեւ մեռելի միս է:

Աղջիկները մօի ջիլ են ուտում, որպէս զի
իրենց ծամերը երկարեն:

Ով որ աղը գետին թափի, էն կեանքում
արտեւանունքներով կը հաւաքի:

Նոր տարի օրը բաղարջ (Նոր-տարի) են թխում
եւ մէկի մէջ փող դնում, ում ձեռքը որ ընկնում
է դրամը, ասում են Նոր տարին նրանն է:

Մեղք են համարում՝

Հացը դանակով կտրելը:

Հացի վրայ ոտ դնելը:

Հացը գետին գցելը:

Կանանչ բոյսը կրակի մէջ գցելը:

Թոնրի մէջ ջուր ածելը:

Ջրի մէջ թփելը:

Կրակի վրայ ջուր ածելը:

Կրրակի օրն եղունգ կտրելը:

Էրեկոյեան տուն աւելելը:

Գլուխը տան շէմքին դրած պառկելը:

Չեռքերը տարածած՝ դրան շէմքին
կանգնելը:

Ճրագը բերանով փշելը:

* * *

Չահարմահալն իր ծոցից տուել է նաեւ
երկու արժէքաւոր աշուղներ, որոնք իրենց ժամա-
նակին որոշ դեր են կատարել. դրանք են Յար-
թուն օղլի եւ Ալիահալերդի: Սրանցից նշանաւորը
Յարթուն օղլին է, որ իր ժամանակաշրջանի

Ժողովրդի մէջ հռչակ է ձեռք բերել եւ մինչեւ
օրս էլ դեռ գիւղացիները երգում են նրա
երգերը:

Այդ երգերը, որոնք երգչի ձեռքով աճ-
փոփոխւած են մի առանձին դավթարի մէջ, առաջին
անգամ հրատարակեցինք 1920 թուին, նոր-
ջուղայում, «ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ», Ա.
Փշրանքներ աշուղական գրականութիւնից
խորագիրը կրող բրոշիւրով: Իսկ մի ընդարձակ
ուսումնասիրութիւն, նորանոր յաւելումներով
եւ տեղեկութիւններով, լոյս ընծայեցինք Վենե-
տիկում հրատարակող «Բազմավէպ»ի մէջ,
աշուղի մահուան յիսնամեակի առիթով (1922
թուին):

Ալլահվերդին երկրորդական աշուղ է:
Թողել է նա բաւական թուով երգեր, որոնք
նոյնպէս ամփոփուած են մի առանձին դավթարի
մէջ, որ այժմ գտնուում է մեզ մօտ:

Նրա սիրոյ եւ շարիպի երգերի մասին մի
ուսումնասիրութիւն լոյս ենք ընծայել Վիեն-
նայում հրատարակող «Արեգ» գիտական-
գրական ամսագրի մէջ (1922 թիւ 6—7):

Թէ Զարթուն օղլու եւ Թէ Ալլահվերդու
մասին աւելի մանրամասն եւ ընդարձակ ուսում-
նասիրութիւն լոյս ենք ընծայելու «Պարսկահայ
աշուղներ» խորագրով գրքիս մէջ, որ այժմ
պատրաստութեան մէջ է:

Ներկայումս ջահարմահալում ապրում են
նաեւ երկու աշուղներ, որոնք իրենց քնարի
լարերով Ժողովրդի մէջ վառ են պահում աշու-

ղութեան սէրը: Դրանք են Մատթէոս Աբրահամեան եւ Մկրտումեան: Սրանցից առաջինն աչքի է ընկնում չօնգուրի վրայ նուագելու, երգելու եւ հէքեաթ ու մասալ պատմելու յատկութիւններով: Երկրորդը նոյնպէս նուագում է չօնգուրի վրայ եւ երգում ու տարածում է պարսկահայ յայտնի աշուղների՝ Յարթուն օղու, Լմիր օղու, Բաղէր օղու, Ղուլ Յովհաննէսի եւ Տէր-Վարապետի երգերը:

Սրանով վերջանում է Չահարմահալի ժողովրդական բանահիւսութեան յօդուածաշարքը:

Մեր ձեռքի տակ պատրաստ ունենք նաեւ Չահարմահալ գաւառը իր աշխարհագրական, պատմական եւ ազգագրական մանրակրկիտ ուսումնասիրութեամբ: Եթէ տնտեսական հանգամանքները նպաստեն, մտադիր ենք հրատարակելու մի առանձին գրքով:



Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Դ Ժ ՈՒՆՐԻՄԱՅ ԲԱՌԵՐԻ

Ադէր — եթէ.

Աւ — վարդագոյն կարմիր.

Ալաշա — մետաքսի կտոր
գոյնզգոյն շերտերով. խայ-
տարդէտ.

Ալուչէ — սալոր բոլորակ եւ
կանաչագոյն.

Ալվալա — գոյնզգոյն, նախ-
շուն.

Ախչա — դրամ.

Անգուման — անհետ.

Ասաման — յասմիկ. երկինք.

Արօջալ — արածել.

Բա — միթէ.

Բաբի — հայր.

Բազազ — կտաւաւաճառ.
ճոթեղէնի վաճառական.

Բաթինք — օտիտ.

Բալ — բարակ ու երկար
կոթով, թթւաշ կլոր ու
կարմիր պտուղ.

Բալա — զաւակ, որդի.

Բալամ ջան — հոգեակս,
սիրելիս.

Բալավար — պատի գլխի
վերջին շարքը.

Բաղ — այգի.

Բանդէ — արարած, մարդ.

Բաջի — քոյր.

Բարաքաթ — օրհնութիւն,
լիութիւն, առատութիւն.

Բարր — ձեւ, տեսակ.

Բարդարար — կանոնաւոր,
հաստատուն.

Բէգ — իշխան, տէր.

Բէգզադ — ազնւականի զա-
ւակ.

Բիգուման — անգիտակ,
անտեղեակ.

Բիստի — պարսկական դրամ.

Բնա անել — սկսել.

Բոր — խոց, վէրք.

Բութազառ — տունկ.

Բուռգայ — չորացրած խոտ.

Բաջիք — խրճիթ.

Բրար — եղբայր.

Բօթլ — շիշ.

Բօռ — բոր, իշաբղեղ.

Գաթէ — իւղով ունցած եւ
մէջը խորիզ լցրած նուրբ
հաց.

Գեալէ — գլուխ, գանկ.

Գեառոտ — խոցոտ, գլուխը
կամ մարմինը.

Գուլաբ — վարդաջուր.

Գօլ — աւազան, վարդ.

Գօլըստան — վարդանոց.

Գօռ — գերեզման.

Դամ — դէմ.

Դանա — հատիկ.

Դանդան — օրօր.

Դանանել — օրօրանել, քնել.

Դանգվօր — գնող, առնող.

Դաստորդաստ — ձեռք
ձեռքի.

Դաքավոր կամ դաքվոր —
թագաւոր, փեսայ.

Դէղին դանակ — դաշոյն.

Դիլագ — մուրաղ, նպա-
տակ.

Դիւլան — Դատարան.

Դիրք — դագաղ.

Դուգմա — կոճակ.

Դուչար լինել — հանդիպել.

Դ՛լ — դոյլ.

Դոշ — կուրծք, լանջ.

Դոշագ — ներքնակ.

Դովր — շուրջ.

Եսխնի — եփած միս և և նրա
ջուրը.

Եաղուծ — յակինթ.

Եայլուղ — թաշկինակ.

Զագ — առարկայ, բան, իր.

Զառ — ոսկեթել գործւածք,
դիպակ.

Զընգղընգալ — հարսի վզից
կախւած փողերի ձայնը.

Զուռնա — արեւելեան նւա-
գարան, որ ածուճ են
փչելով, ունի խիստ սուր
ձայն. նւագափող.

Էի — եղել.

Էնդստէն — այն ժամա-
նակ, այնուհետեւ.

Էրնել — քառեշով կամ
հորով թեզը քամուն
տալ, ցորենը դարման'ց
բաժանել.

Ըստ — ուղտ.

Ըն — այն.

Ըռանգին — փոխ. մտքով
նշանակում է գեղեցիկ.

Ըռլուն-թռլուն — բոլոր
արարածներ.

Թակալէ — կանացի շոր.

Թամաշա — տեսարան.

Թամբաքու — նարգիլէի
(կլկլակի) ծխախոտ.

Թարիֆ անել — պատմել.

Թէզ — շուտափոյթ, շտապ.

Թիքայ — պատառ, կտոր.

Թիֆան — փոթորիկ.

Թրմաշալ — նրբագործ
թանկագին շալ, ցփսի.

Թոխմ — սերմ.

Ժուկ — ժամ, ժամանակ.

Իզա — այն, վկայ.

Իլիկ — ոսկրի ծուծ, ողնա-
շար.

Ին — էին.

Ինչուր — միջեւ.

Ինտի — այնտեղ.

Իստի — այստեղ.

Իտէնց — այդպէս.

Լամ տալ — թափել?

Լաշիգ — կանացի շղարշ,
քող.

Խալի — գորգ.

Խալիչէ — փոքրիկ գորգ.

Խառ — յարմար, վարդ.

Խիզան — ընտանիք, գեր-
դաստան.

Խլէզ — մողէզ.

Խշակէլ — շրանալ, փչել.

Խնոցի — կաթը ծեծելու
կամ շարժելու աման՝ կա-
րագը բաժանելու համար.
Խտուր — հետ, միասին.

Յէր — ծայր.

Կարմիր գուլուլ — գնդակ.

Կըռնըգ — կռնակ.

Կուլ դուլ — կլոր.

Կօնի — կանի.

Կօպլ — ցուպ. մահակ.

Հայալ — արդար. հարազատ.

Հայիմդրիք — ձաւար.

Համիշայ — միշտ, մշտապէս.

Հայս կամ հաշ — հարս.

Հաշնիք — հարսանիք.

Հարաթ — կարօտ, փափագ.

Հարամ — անմաքուր. պիղծ.

Հարգիղ բնաւ, երբէք,
ամենեւին.

Ղադաղան անել — արգի-
լել.

Ղապէ — փորձանք.

Ղազմէ — բիւշ.

Ղաթիլիս — մածուն.

Ղայամքար — փորագրիչ.

Ղայիմ — հաստատ, պիւրկ.

Ղայլան — ծխելու մի գոր-
ծիք արեւելքում, որի
ծոխը նախապէս անց-
նում է ջրի միջով եւ
մաքրուում. ծխամորձ.

Ղանդ — շաքար.

Ղոմլի — կարմիր.

Ղօվղէ — խուրձ.

Ճալվէր — խոպոպիք. կա.
նանց մազերի այն մասը, որ
ոյորում են եւ քունքերի
վրայից կախ թողնում.

Ճար — յոյս.

Ճէրմակ թաթլիգ — երեխայ.

Ճուխկ — գոյգ.

Ճուղկ — ճիւղ.

Ճուճուկ — ձագուկ.

Ճուտ — կտոր.

Ճօլօլակ — կախւած, քաշ
բնկած մի բան.

Մակար — փէսաւէրք.

Մահնի — նշանակութիւն,
իմաստ.

Մահրում — զուրկ, զրկւած.

Մադաշ — ունեյի.

Մաջլս — ժողով, խնջոյք.

Մատաղ — զուրբան. զոհ.

Մէհնքեաշ — շարշարուող.

Միել — բռնել, մեծա-
նել, խրել.

Մհանայ — պատուակ. —

Մոխրակատար — փոխ.
մաքով՝ վշտահար, սգա-
ւոր.

Մօղի — երինջ.

Մօնթ — վանական աշա-
կերտ.

Մօնթարան — վանական
դպրոց.

Յամիշա — միշտ.

Յեթում — որբ.

Յինչուգ — մինչեւ.

Յուշունց — յիշոց, հայ-
հոյեանք.

Նա. — դագսղ.

Նաջառ — անճար, խեղճ,
հիւան.

Նառ նառ — ոչ մէկը.

Նի — ներս.

Նիաթ — շար աչք, նպա-
տակ.

Նշին — նստող, մեծաւոր,
գլխաւոր.

Նուրի — կարճ փայտի վրայ
հին շորեր հագցրած մար-
դակերպ խրճիկ.

Նօղ — պարսկաստանում
պատրաստւած մի տեսակ
մանր շաքար.

Նօղլաման — շաքարի աման.

Շաղկ — ուղիղ.

Շիր — առիւծ.

Շնաս — ճանաչող, ծանօթ.

Շուրուշկան — Սպահանի
Փէրիա գաւառի հայա-

բնակ մի գիւղը, որ յայտնի է իր «հրաշագործ» եւ «սխտահալած» աւետարանով.

Հօրօշ — հարսանքի ժամանակ ուրախութեան բացականչութիւն.

Ուլանոց — ուլերի փարախ, գհուկ.

Ումրը կամ ումր — կեանք, արեւ.

Ումուտ — յոյս.

Չաղի անէյ — պատրաստել.

Չաղլ — ջրաղաց.

Չանգլ — կեռ, ճանկ.

Չանգլ — կեռ, ճանկ.

Չարվադար — ջորեպան կամ ձիապան. որ իր ջորիով կամ ձիով ապրանք եւ մարդիկ է փոխադրում.

Չաքմէք — երկարավազ կօշիկ.

Չմար — ինչու համար.

Չօգուռ — սազի նման լարաւոր նւագարան է, որ ընդհանրապէս գործ են ածում աշուղները.

Պաղար — առեւտուր.

Պալ — մեղր, քնար.

Պեծ — կայծ.

Պպղել — կրկղել, գարշապարի վրայ նստել.

Պռկտաց — որբացած, խեղճ.

Ձհրա — ճախարակ.

Ջամ — պղնձից շինած աման, ջուր ածելու.

Ջգրվել — բարկանալ.

Ջհայսար — սաւան. սպիտակ, կապոյտ կամ սեւ կտորից լայն ծածկոց, որ պարսկաստանում մինչեւ օրս էլ տեղ տեղ հայ կա-

նայք ծածկում են տանից դուրս գալիս.

Ջուղար — պատասխան.

Ջուռն — սիրելի, հոգի. ուրախութեան բացականչութիւն.

Ջուննամմարգ — անձնագիր լինել.

Ռիշէ — արմատ.

Սաղ — լարաւոր նւագարան, որ գործ են ածում աշուղները.

Սալագ — կողով.

Սայեա — բաժին.

Սանդուխա — փոքրիկ սընտուկ.

Սավադ — արմատ, ցեղ.

Սըմբուլ — մաղանման խոտ.

Սիդ — սիրտ.

Սնգութաք — բոժոժ.

Սութուն — սիւն.

Սուլուլ — սրածայր.

Սուսան — անուշահամ բոյս դաղձնի տեսակից.

Սոյ — սերունդ, ցեղ.

Սովդագար — վաճառական, առեւտրական.

Վայդանա — գրդակ.

Վէկալ — վերցրու.

Վոյն — որբ.

Վով — ով.

Տաստակ — խոշոր փուշ.

Տկէհանց — տակից, ներքեւից.

Տրիժան — պիծակ.

Փալանգ — վագր.

Փառչ — կաւից շինած գինու կամ ջրի աման.

Փաքիղ — մաքուր, յստակ.

Փիր — հաւատ, ծերունի.
Փօշտայ — խուրձ.

Քաջալ — ճաղատ.

Քաքուլ — գիսակ.

Քեաղխուդա — գիւղա-
պետ, տանուտէր.

Քշատնը — կը շատանայ.

Քշկուլ — կոկոսեան ըն-
կուղի կեղեւից շինած
անօթ, որ գէրվիշները
ուսից կախում են եւ
մէջը ողորմութիւն հաւա-
քում.

Քուշէ — փողօց.

Քուրում — քոյրիկ.

Քօլք — քրդի տականք.

Քօքել — լարել, պատրաս-
տել.

Օջաղ — ընտանիք, հայրենի
յարկ.

Օխչըր — ոչխար.

Օխտը — եօթը.


Օնչով — ոչ ոք.

Օրթընած — որդնոտած.

Պառ — գարնկեցութիւն,
գուշակութիւն.

Պլանաքեասն — այսինչն.





ገሐሐ ኔ ቅጥ. 3.-:

